ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ.

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

ԱՐԹՈՒՐ ԱԹԱՆԵՍՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏԻՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Արթուր Աթանեսյան
Արթուր Մկրտիչյան

Երևան – 2021

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ա 263

Կոլեկտիվ մենագրությունը երաշխավորվել է հրատարակման Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Աթանեսյան Արթուր, Մկրտիչյան Արթուր
Ա 263

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ.
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ:

Սոցիոլոգիական հետազոտություն /կոլեկտիվ մենագրություն / Ա. Աթանեսյան, Ա. Մկրտիչյան.-

Եր.: Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ(գ. մ.) հայաստանյան մասնաճյուղ, 2021 - 96 էջ: Հրատ. «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

Սույն կոլեկտիվ մենագրությունը հեղինակային աշխատանք է, ներկայացված տեսակետները կարող են չարտացոլել «Սոցիես» փորձագիտական կենտրոնի տեսակետները:

ISBN 978-9939-1-1444-6
© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ(գ. մ.) հայաստանյան մասնաճյուղ, 2021
© Հեղինակային կոլեկտիվ:

KONRAD ADENAUER STIFTUNG

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

SOCIES expert centre

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....7

ՄԱՍ 1. Հայաստանյան հասարակության արտաքին-քաղաքական նախապատվությունները.....13

ՄԱՍ 2. Ռուսաստան-Արևմուտք բևեռներում Հայաստանի կողմնորոշումների ընկալումները՝ հայաստանցիների քաղաքական մասնակցության և տեղեկատվական-հաղորդակցական միջոցների սպառման համատեքստում.....25

ՄԱՍ 3. Հայաստանը բարեկամ և թշնամի պետությունների խաղադաշտում. հասարակության նախապատվություններ և փոփոխվող պատկերացումներ 37

ՄԱՍ 4. Ռուսաստանի և այլ պետությունների ակնկալվող դերակատարումը ՀՀ անվտանգության և զարգացման հարցերում.....58

ՄԱՍ 5. Հայ-ռուսական հարաբերությունները ՀՀ և Լեռնային Ղարաբաղի անվտանգության ապահովման հարցերում.....64

ՄԱՍ 6. Հայաստանցիների հանրային ընկալումները 2020թ. ղարաբաղյան պատերազմում և հետպատերազմյան իրավիճակում ՌԴ դերակատարման վերաբերյալ.....80

Վերջաբան.....93

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած զանգվածային քաղաքական բողոքի ցույցերը (ներառյալ բողոքի դիսկուրսը) հանգեցրել են իշխանափոխության, երկրի քաղաքական վերնախավի մեծ մասի պաշտոնաթողության, և Էապես անդրադարձել են ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության վրա: 2020թ. հուլիսին ադրբեջանահայկական սահմանին ռազմական գործողությունների ժամանակ ռուսաստանյան լրատվական տարածքի հակահայկական տեղեկատվական-քարոզչական հատվածը (մասամբ վերահսկվում է ադրբեջանցի օլիգարխների և Ռուսաստանում լրատվամիջոցների ադրբեջանցի սեփականատերերի կողմից) միասնաբար կենտրոնացավ հայ-ռուսական հարաբերությունների խաթարման վրա՝ քննարկելով դրանց ձախողվածությունն ու համապատասխանաբար ներազդելով ՌԴ-ում և ՀՀ-ում հանրային կարծիքի վրա:

Նման հանրային վիճաբանություններն ու տարընթերցումները, ինչպես նաև հայ-ռուսական փոխհարաբերություններում օբյեկտիվորեն առկա հարցերը բերեցին նրան, որ երբ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը սկսեց իր ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում, հայաստանյան և ռուսաստանյան հասարակություններում չկար ընդհանուր դիրքորոշում ղարաբաղյան հակամարտության և ռուսական կողմի մասնակցության ձևաչափի վերաբերյալ: Ընդհուպ մինչև Ադրբեջանի, Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից 2020թ. նոյեմբերի 10-ից հրադադարի մասին եռակողմ հայտարարության ստորագրումն[1] ու Լեռնային Ղարաբաղի մնացյալ հայկական անկլավում ռուսական խաղաղապահ ստորաբաժանումների տեղակայման մասին որոշումը՝ Հայաստանում դաշնակից ՌԴ-ին մեղադրում էին պասիվ դիրքորոշման մեջ, Ռուսաստանում ՀՀ-ին՝ հակառուսականության: Հայաստանում ՌԴ միջնորդական մոտեցումները շարունակում են ոչ միանշանակ ընկալվել. ոմանք դրանք համարում են դաշնակից Հայաստանին օգնելու Ռուսաստանի համարժեք (անգամ՝ աննախադեպ) և բարեկամական ջանքերի արտահայտում, ոմանք տեսնում են Ռուսաստանի ցանկությունը տարածաշրջանում իր ներկայությունն ամրապնդելու փորձեր, ոմանք էլ անգամ փորձում են Ռուսաստանին մեղադրել Ադրբեջանի և Թուրքիայի հետ միասին Հայաստանը կիսելու մեջ:

1 Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации (2020) Официальные сетевые ресурсы Президента России. 10.11. (http://kremlin.ru/events/president/news/64384)

Սրան զուգահեռ հայ հասարակությունն ավելի էր սպասում նաև Եվրամիությունից՝ ղարաբաղյան պատերազմում Ադրբեջանի և Թուրքիայի գործողություններին արձագանքելու կապակցությամբ: Եվրոպական կառույցների հիմնական արձագանքը եղել է «հակամարտող բոլոր կողմերին» ուղղված նմանատիպ կոչերի տեսքով: Բացառությամբ Ֆրանսիայի, որը որոշակիորեն ակտիվ դիրքորոշում է որդեգրել՝ ներառյալ Ֆրանսիայի նախագահի և արտգործնախարարի հայտարարություններն Ադրբեջանի կողմից պատերազմում Սիրիայից իսլամիստ և ահաբեկիչ վարձկաններին օգտագործելու վերաբերյալ[2], 2020թ. աշնանը տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում ԵՄ կողմից որևէ գործնական քայլ չէր արվել:

Օբյեկտիվորեն ավելի քան պասիվ էր ԱՄՆ՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի, դիրքորոշումը. հայաստանյան հասարակությունը կարող էր ակնկալել ԱՄՆ հստակ և որոշիչ դիրքորոշում Լեռնային Ղարաբաղում խաղաղ հայ բնակչության իրավունքների պաշտպանության և պատերազմում Թուրքիայի դերակատարումը զսպելու հարցերում, սակայն դա տեղի չունեցավ, մասնավորապես, ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների պատճառով:

Ըստ այդմ՝ 2018թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից, իսկ հետո՝ 2020թ. սեպտեմբեր-նոյեմբերին ղարաբաղյան պատերազմից հետո, հայաստանյան հասարակությունում ՌԴ, ԱՄՆ և ԵՄ դերի ընկալումը կարող էր էապես փոխվել: Տարածաշրջանային հարցերում ԵՄ, Ռուսաստանի և Միացյալ Նահանգների դերի հանրային ընկալումները, ինչպես նաև Հայաստանի քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտք-Ռուսաստան (ներառյալ տարածաշրջանային կառույցներին անդամակցումն ու համագործակցումը) հետպատերազմյան փուլում այն հիմնահարցերից է, որն ունի և կունենա կարևոր ազդեցություն Հայաստանում և տարածաշրջանում հետագա ներքին և արտաքին քաղաքական փոփոխությունների վրա:

Սույն հետազոտության նպատակն է՝ բացահայտել ՀՀ-ում «Թավշյա հեղափոխությունից» և 2020թ. ղարաբաղյան պատերազմից հետո հայաստանյան հասարակության ընկալումները ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթությունների վերաբերյալ: Մասնավորապես, շեշտադրվել է «բարեկամ» և «թշնամի» պետությունների, նախընտրելի և ոչ ցանկալի քաղաքական ուղղությունների և հարաբերությունների, արտաքին փոխհարաբերություններում ռուսական, եվրո-

2 Макрон заявил, что более 300 сирийских исламистов переброшены через Турцию в Карабах (2020) TASS.ru. 02.10. (https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9608753)

պական և ամերիկյան (արևմտյան) ուղղությունների զարգացման և մի շարք այլ անկյունաքարային հարցերի վերաբերյալ հանրային պատկերացումների դուրս-բերումը, բացատրությունն ու գնահատումը:

Հետազոտության խնդիրներից են.

1. գնահատել հայ-ռուսական հարաբերությունների մակարդակն ու հեռանկարները՝ հայաստանցիների ընկալումներում,

2. դուրս բերել հայաստանցիների նախընտրությունները Հայաստանի՝ Արևմուտք-Ռուսաստան կողմնորոշումներում,

3. բացահայտել հարցվողների պատկերացումները ՀՀ՝ ԵԱՏՄ-ին և ՀԱՊԿ-ին անդամակցության արդյունավետության և հեռանկարայնության վերաբերյալ՝ ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի հետ Հայաստանի փոխհարաբերությունների հետ համեմատությամբ,

4. բնութագրել ՌԴ և այլ պետությունների մասին հայաստանցիների ընկալումները՝ բարեկամ-թշնամի եզրույթներում,

5. բնորոշել հայաստանյան հասարակության պատկերացումներում «ռուսական» և «եվրոպական» մշակույթների արժեքային հեռավորությունը հայ ազգային ինքնությունից,

6. գնահատել Հայաստանում «Թավշյա հեղափոխությունից» հետո առաջ եկած գործոնների, այդ թվում՝ հետհեղափոխական ՀՀ իշխանությունների գործելակերպի ազդեցությունը հայ-ռուսական հարաբերությունների վրա՝ ըստ հանրային կարծիքի,

7. դուրս բերել հանրային պատկերացումները Լեռնային Ղարաբաղում 2020թ. աշնանը տեղի ունեցած պատերազմում հայկական կողմի պարտության պատճառների, ՌԴ դերակատարման, հետագա զարգացումներում Ռուսաստանի, ԵՄ, ԱՄՆ-ի և այլ դերակատարների հնարավոր մասնակցության վերաբերյալ: Հետազոտությունն իրականացվել է քանակական մոտեցման շրջանակներում, կիրառվել է զանգվածային հարցման ստանդարտացված հարցազրույցի մեթոդը: Հետազոտության ընտրանքը ներառում է 1530 հարցվողներ, ներկայացնում է Հայաստանի ողջ բնակչությունը (Երևան քաղաքում և 10 մարզերում) և ապահովում վիճակագրական սահմանային սխալը՝ ± 3,3 %, 0.99 հավանականությամբ:

Ելնելով հետազոտության ռեսուրսային ապահովությունից և ակնկալվող տվյալների հնարավոր առավել բարձր վիճակագրական նշանակալիության ապահովման պահանջից՝ հետազոտության ընտրանքների ծավալները սահմանվել են.

• Երևանում՝ 570 հարցվող,
• գյուղերում՝ 530 հարցվող,
• մարզային քաղաքներում՝ 430 հարցվող:

Սեռատարիքային բաշխվածությունը հետևյալն է (աղյուսակ 1).

Տարիք	Արական սեռ	Իգական սեռ	Ընդամենը
18-34	231	300	**531**
35-49	192	195	**387**
50-64	208	166	**374**
65 և բարձր	101	137	**238**
Ընդամենը	**732**	**798**	**1530**

Ընտրանքը Երևանում

Երևանում իրականացվել է ստրատիֆիկացված կլաստերային ընտրանք:

Սահմանվել է, որ Երևանում կլաստերների քանակը լինելու է **62 (ընտրատեղամաս)**: Յուրաքանչյուր կլաստերում նախատեսված էր իրականացնել մինչև **10 հարցում (7-ից 10-ը)**, Երևանում՝ ընդհանուր առմամբ 570 հարցում:

Որպես ընտրանքային կլաստերներ են սահմանվել 2018թ. ՀՀ ԱԺ ընտրության ընտրատեղամասերի ցուցակները (Երևանում առկա է 10 ընտրատարածք կամ հետազոտության կլաստեր, որոնցում ընդհանուր հաշվով կա 479 ընտրատեղամաս):

Այդ ցուցակը ստրատիֆիկացվել է.

• նախ՝ ըստ ընտրատարածքների,

• ապա՝ յուրաքանչյուր ընտրատարածքում՝ ըստ դրա ընտրատեղամասերում ընտրողների քանակի:

Դրանից հետո, ընտրանքային 62 կլաստերների ընտրության համար, իրականացվել է պատահական սկզբով մեխանիկական ընտրանք (այսինքն՝ կեղծ պատահական ընտրանք): Այդպիսով ըստ այդ բնութագրերի ապահովվել է աշխարհագրական տեսակետից ինքնակշռվող ընտրանք:

Յուրաքանչյուր կլաստերում իրականացվել է քվոտային ընտրանք՝ խուսափելու համար մերժումների հետևանքով ընտրանքի սեռատարիքային մեծ շեղումից, ինչպես նաև պատահական ընտրանքի հետ կապված բազմաթիվ դժվարություններից, որոնք պայմանավորված են նրանով, որ Երևանում հարցազրույցից հրաժարումների քանակը հասնում է և երբեմն գերազանցում 50%-ը:

Հրուցավարը երթուղին սկսում էր կլաստերների ցուցակում տվյալ կլաստերի

համար նշված հասցեից և շարունակում փողոցի երկու ուղղությամբ՝ այցելելով յուրաքանչյուր 3-րդ տունը (բազմաբնակարանային շենքերում հարցումը սկսելով **երրորդ** շենքի 5-րդ բնակարանից սկսած յուրաքնչյուր 10-րդ բնակարանում, պահպանելով «քայլը 10» հաշվարկը հաջորդ շենքերում):

Եթե փողոցում հասցեները սպառվել են, իսկ ընտրանքը չի ավարտվել, ապա երթուղին շարունակվում էր կլաստերի սկզբնական հասցեին ամենամոտ խաչմերուկից՝ ուղղահայաց երկու ուղղություններով: Եթե բնակելի տներ չկան հենց սկզբից, ապա սկզբնակետից պետք էր գնալ ձախ կամ անցնել փողոցը: Եթե թիրախային բնակարանում ընդհանրապես ոչ ոք փաստացի չէր բնակվում, հարցումն իրականացվել է անմիջապես հաջորդ տանը:

Յուրաքանչյուր կլաստերում իրականացվել է մինչև 10 (7-ից 10-ը) հարցազրույց: Հարցվողների քվոտաները սահմանվել են ըստ սեռատարիքային բաշխման, որպես տարիքային կատեգորիաներ են սահմանվել 18-34, 35-49, 50-64 և 65 և բարձր տարիքային խմբերը: Կլաստերներում քվոտային բաշխումները միմյանցից տարբերվել են սեռատարիքային մեկ կամ երկու խմբի քվոտաներով, այնպես, որպեսզի ընտրանքի սեռատարիքային բաշխումը որոշակիորեն համապատասխանի ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներին:

Մարզերում որպես կլաստեր նույնպես սահմանվել են տվյալ ընտրատարածքի համայնքային ընտրատեղամասերը: Քաղաքների և գյուղերի ընտրանքը կազմավորվել է՝ ելնելով վարչատարածքային բաժանման առանձնահատկություններից: Գյուղական համայնքների քանակը սահմանվել է 58, յուրաքանչյուրում պատահական ընտրությամբ ընտրվել է մեկական կլաստեր: Մարզային քաղաքներում կլաստերների քանակը 46 էր: Յուրաքանչյուր կլաստերում իրականացվել է 7-ից 10-ը հարցում:

Հարցվողի ընտրությունը.

• յուրաքանչյուր կլաստերում (գյուղական ընտրատեղամասում) իրականացվել է քվոտային ընտրանք՝ խուսափելու համար մերժումների հետևանքով ընտրանքի սեռատարիքային մեծ շեղումից,

• յուրաքանչյուր հաջորդող հասցեում իրականացվել է հարցազրույց այն անձի հետ, ով համապատասխանում է դեռևս չլրացած քվոտային:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցած ռեսպոնդենտների տոկոսային բաշխումն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված է գծապատկեր 1-ում[3].

3 Լեռնային Ղարաբաղի բնակիչներից հարցմանը մասնակցել են մի քանի տեղահանված մարդիկ, ովքեր բնակություն են հաստատել ՀՀ-ում:



Գծապատկեր 1. Հարցմանը մասնակցածների բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, %

Հետազոտությունն իրականացվել և ամփոփվել է 2021թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի և «Սոցիես» փորձագիտական կենտրոնի սոցիոլոգների կողմից՝ Հայաստանում Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի գրասենյակի հետ համագործակցությամբ:

ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևմտյան պետությունների և սոցիալիստական ճամբարի երկրների միջև սառը պատերազմի ավարտին ավարտվեց նաև երկբևեռ աշխարհի հերթական փուլը, և առաջ եկավ բազմաբևեռության մոտեցումը, որի համաձայն կարող ուժերի և երկրների զարգացումը և կայացումը պետք է բխեր ազատ մրցակցության, համագործակցության, շուկայական տնտեսության զարգացման, մարդու իրավունքների և ժողովրդավարության գործընթացների գերակայության վրա: Հետխորհրդային պետություններում այդ միտումների տեղայնացումը տեղի ունեցավ տարբեր արագությամբ, տարբեր խորությամբ և արդյունավետության տարբեր աստիճանով: Հետխորհրդային որոշ երկրներ կարողացան յուրացնել, տեղայնացնել և զարգացնել շուկայական տնտեսության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մոտեցումները, մյուսները հետընթաց ապրեցին դեպի մենիշխանական, կլանային, ինքնակալական կամ բազմակուսակցական համակարգում փաստացի մեկ առաջնորդող կուսակցության, մեկ անձի կամ անձանց խմբի կողմից պետության կառավարման մոդելին:

Միևնույն ժամանակ, և՛ արդյունավետորեն ժողովրդավարացվող, և դեպի ոչ ժողովրդավարական /կիսաժողովրդավարական/ կառավարման մոդելներ կողմնորոշված հետխորհրդային պետություններն իրենց արտաքին քաղաքականության մեջ ստիպված եղան կա՛մ ընտրելու քաղաքակրթական այս կամ այն բևեռը /Արևելք, Արևմուտք, Եվրոպա, Ռուսաստան, Թուրքիա, Չինաստան/, կա՛մ փորձեցին հավասարակշռել արտաքին բևեռների ազդեցությունը որոշակի կոմպրոմիսային ձևաչափով /կոմպլեմենտար քաղաքականություն/:

ՀՀ երրորդ հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության 30 տարվա ընթացքում այդ մոտեցումները պարբերաբար զուգամիտվել են, նաև՝ միմյանց հակասել: ՌԴ, ԵՄ, առանձին եվրոպական երկրների, առանձին հետխորհրդային երկրների, ԱՄՆ և ՆԱՏՕ պետությունների հետ փոխհարաբերություններն ունեցել են տարբեր խորությունն ու արդյունավետության տարբեր աստիճան, ինչպես նաև տարբեր բնույթ են կրել՝ ռազմավարական, բարեկամական, ռազմաքաղաքական, տնտեսական և այլն: Զուգահեռաբար որոշ չափով

փոփոխվել են նաև նախկին և ներկա բարեկամների, թշնամիների, չեզոք պետությունների մասին հայաստանցիների ընկալումները, որոնք, մի կողմից, ներքին և արտաքին քաղաքական մոտեցումների պատճառ, մյուս կողմից՝ հետևանք դարձան:

Մասնավորապես, Արևմուտք-Ռուսաստան փոխհարաբերությունների կտրուկ և շարունակվող սառեցման, դրա հետևանքով՝ աշխարհի նոր բևեռացման հետևանքով խիստ սահմանափակ են դարձել փոխլրացման քաղաքականության ՀՀ հնարավորությունները, իսկ 2020թ. աշնանը ռազմական գործողությունները Ղարաբաղում լրացուցիչ շեշտադրում մտցրեցին բարեկամների և թշնամիների վերաբերյալ հայաստանցիների պատկերացումներում:

ՌԴ՝ որպես ՀՀ ռազմավարական դաշնակցի հանդեպ հայաստանցիների հանրային ընկալումների և վերաբերմունքի փոխակերպումները պետք է դիտարկել գլոբալ և տարածաշրջանային այլ բևեռների, միջպետական միավորումների և առանձին պետությունների հետ Հայաստանի փոխհարաբերությունների, և դրանց վերաբերյալ հայաստանցիների պատկերացումների համատեքստում:

Նախևառաջ, տեսնենք, թե ներկայիս Արևմուտք-Ռուսաստան բևեռացման տիրույթում, հայաստանցիների պատկերացումներում, ինչպիսի տեղ պետք է զբաղեցնի Հայաստանը (գծապատկեր 2).



Գծապատկեր 2. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը, %

Հետաքրքիր է տեսնել, թե հայաստանյան հասարակության մեջ ապրող տարբեր սերնդի քաղաքացիներ վերոնշյալ մոտեցումներում ինչպիսի նախընտրություններ ունեն: Մասնավորապես, ավագ՝ հետխորհրդային սերունդը, հնարավոր է, ավելի ռուսամետ հայացքներ ունենա, քան Հայաստանի անկախության սերունդը, որը սոցիալականացվել է գլոբալացման և արևմտականացման պայմաններում: Դիտարկենք տարիքային հիմնական երեք սերունդների ռեսպոն-

դենտների կողմնորոշումների առանձնահատկությունները Ռուսաստան-Արևմուտք տիրույթում (բացառելով փոքրամասնություն կազմող՝ որևէ բևեռին չմիանալու պատասխանները)[4].



Գծապատկեր 3. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը (ըստ բնակիչների տարիքային խմբերի, %)

Ինչպես տեսնում ենք ստացված արդյունքներից, ռուսամետ դիրքորոշումները որոշ չափով գերիշխում են տարիքային բոլոր խմբերի հայացքներում, սակայն առավել արտահայտված են ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ, մինչդեռ գրեթե նույնն են երիտասարդ և միջին տարիքի հայաստանցիների մոտ: Մինչդեռ, արևմտամետության առումով երևում է սերունդների տարբերությունը. միտվածությունն Արևմուտքի հետ համագործակցությանը աճում է ավագ սերնդից դեպի միջին սերունդը, և առավել արտահայտված է երիտասարդների հայացքներում:

Կարևոր է նաև դիտարկել արտաքին քաղաքական կողմնորոշումների մասին Հայաստանի քաղաքաբնակ և գյուղաբնակ ռեսպոնդենտների պատկերացումները[5].

4 Կրուսկալ-Ուոլիս վիճակագրական թեստը ցույց է է տալիս նշանակալի վիճակագրական կապ, որտեղ H = 25.042; p<0.001

5 Ման-Ուիտնի Յու վիճակագրական թեստը ցույց է է տալիս նշանակալի վիճակագրական կապ, որտեղ U = 221.284; p<0.001



Գծապատկեր 4. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը (ըստ հարցվածների բնակավայրի, %)

Դարձյալ, մեծամասնության՝ դեպի Ռուսաստան միտվածության պայմաններում նկատելի է գյուղաբնակների մոտ ռուսամետության ավելի բարձր արտահայտվածություն, քան՝ քաղաքաբնակների մոտ: Այս հանգամանքը կարելի է բացատրել հատկապես երևանցիների՝ ՀՀ քաղաքային բնակչության մեծ մասը կազմելու, իրենց՝ գլոբալ տեղեկատվական գործընթացներում ներգրավված լինելու, ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները քաղաքաբնակների համար ավելի մատչելի լինելու, քաղաքաբնակների՝ տուրիզմին ակտիվ մասնակցելու և արևմտյան պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու գործոններով: Մինչդեռ, գյուղաբնակների էական մասը կախված է ռուսական շուկայում գյուղամթերքն իրացնելու հնարավորությունից, և հանդես է գալիս որպես սեզոնային արտագնա աշխատողներ՝ դարձյալ հիմնականում ՌԴ-ում և հետխորհրդային ռուսալեզու տարածքում:

Ռուսաստան-Արևմուտք կողմնորոշումներում կարևոր գործոն կարող է համարվել բնակիչների կրթական մակարդակը: Այս գործոնի ազդեցությունը կարելի է տեսնել գծապատկեր 5-ում[6].

6 Կրուսկալ-Ուոլիս վիճակագրական թեստը ցույց է է տալիս նշանակալի վիճակագրական կապ, որտեղ H = 29.222; p<0.001



Գծապատկեր 5. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը (ըստ բնակիչների կրթական մակարդակի, %)

Կարելի է տեսնել, որ առավել ռուսականամետ են անավարտ միջնակարգ կրթություն ունեցողները՝ փաստացի կրթություն չունեցող բնակիչները, իսկ բարձրագույն կրթություն ունեցողները Հայաստանի՝ դեպի Ռուսաստան բևեռացման հանդեպ առավել քննադատական են վերաբերվում: Միևնույն ժամանակ, կարելի է տեսնել, որ արևմտամետության առումով կրթական տարբեր մակարդակ ունեցողների մոտեցումները միմյանց էապես մոտ են, և դրանցում բարձրագույն կրթություն ունեցողներն առաջատար են: Հետաքրքիր է նկատել, որ գիտական կոչումներ ունեցող ռեսպոնդենտների հայացքները խիստ բևեռացված են. նրանց մի մասն առավելապես ռուսամետ է, մյուս մասը՝ առավելապես արևմտամետ: Հայաստանի մտավոր վերնախավի նման բևեռացվածությունը կարող է նշանակել, որ պետության արտաքին քաղաքականության կողմնորոշվածության, մշակման ու իրականացման հարցերում Հայաստանի մտավորականությունը պառակտված է, կամ ամենաքիչը՝ չի երկխոսում:

Միջպետական հարաբերությունների կարևորագույն ռեսուրսներից է իրենց հասարակությունների փոխընկալումները, որոնք, մշակութային զգալի հեռավորության[7] պայմաններում, կարող են խոչընդոտել պետական մակարդակում

7 Մշակութային հեռավորությունը տարբեր հասարակություններում մշակութային նորմերի, պատկերացումների, արժեքների միջև տարբերության մակարդակն է: Տե՛ս, օրինակ. Trapani, T. Cultural Distance, Psychic Distance & Cultural Adaptation. http://hopeinterculturalcomm.weebly.com/cultural-distance-psychic-distance--cultural-adaptation.html

միմյանց ուղղված համագործակցային որոշումների ընդունումը, իսկ հասարակությունների միջև սերտ կապերի, փոխադարձ արդյունավետ ըմբռնման, ընդհանուր հասկանալի լեզվի օգտագործման, առօրյա մակարդակում մշտական շփման և միմյանց հանդեպ արժեքային բացվածության պարագայում պետությունների պաշտոնական հարաբերությունները դյուրին և համապարփակ դառնալու ռեսուրս են ստանում:

Խորհրդային Միության փլուզումից հետո ընդհանուր մշակութային տարածությունը սկսեց տրոհվել և փոխակերպվել, ինչի հետևանքով նորանկախ որոշ հանրապետություններ վերադարձան իրենց ազգային նախախորհրդային ինքնության մասին հիշողության վերականգնմանն ու դրա հիման վրա անկախ պետականության կառուցմանը, որոշները՝ ազգային ինքնության ձևավորմանն ու կառուցակցմանը, այդ թվում՝ ի հակադրություն մյուսների (բացասական ինքնություն): Այս գործընթացների հետևանքով ռուսերեն լեզվի և ռուսական մշակույթի շրջանառությունը, այդ թվում՝ ռուսաստանյան ԶԼՄ-ների, ուսումնական հաստատություններում ռուսերենի դասավանդման, պաշտոնական մակարդակում և առօրյայում ռուսերենով հաղորդակցվելու միջոցով, որոշ հետխորհրդային պետություններում սկսեց կտրուկ նվազել (օրինակ՝ Հայաստանում լեզվի մասին օրենքի ընդունումն ու ռուսական դպրոցների փակումը՝ ռուսաստանյան հեռուստալիքների հեռարձակման պահպանմամբ), մյուսներում ունեցավ ավելի դանդաղ և քաղաքականացված ընթացք (օրինակ՝ Ղազախստանում ռուսերենի պահմանումը որպես միջմշակութային հաղորդակցման լեզվի): Այս ամենի հետևանքով խզվեց նաև այդ պետությունների և Ռուսաստանի միջև ԽՍՀՄ ժամանակահատվածում ձևավորված մշակութային կապը, որը նպաստավոր էր նաև ընդհանուր քաղաքական, տնտեսական ուղենիշերի մշակման և իրականացման առումով:

Միևնույն ժամանակ, հատկապես ԽՍՀՄ փլուզումից հետո նոր հեռանկարներ և տարածություններ ստացած արևմտականացումը հետխորհրդային հանրապետությունների համար ստեղծեց դեպի արևմտյան (արևմտաեվրոպական, ամերիկյան) քաղաքակրթություն, իրավական, տեղեկատվական և կրթական տարածություն ձգտելու նոր հնարավորություններ: Մինչդեռ «պատուհանը դեպի Եվրոպա» և ԱՄՆ շարունակում էր բացվել, հատկապես՝ երիտասարդ սերնդի համար, մինչ այդ լայնորեն բացված դուռը դեպի ռուսական մշակույթ, հասարակություն, փոխհամագործակցություն հասարակությունների արժեհամակարգում սկսեց կորցնել իր մրցունակությունն ու փակվել: Որպես հետևանք՝ որոշ պետություններ ուղղակի հակադրվեցին ՌԴ-ին (Մերձբալթյան երկրներ, Վրաստան, Ուկրաինա), որոշները մասամբ մնացին ռուսական մշակութային տիրույթում՝

այն չքանդելով, սակայն զուգահեռաբար զարգացնելով ազգայինը (Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան), որոշները փորձեցին տարբեր արդյունավետությամբ բալանսավորել արտաքին աշխարհի հետ փոխհարաբերությունների արևմտյան և ռուսական (Հայաստան), նաև՝ Թուրքական (Ադրբեջան, Ուզբեկիստան) ուղղություները:

ՀՀ և ՌԴ միջև ստեղծված մշակութային որոշակի հեռավորություն կարող է, մի կողմից, խոչընդոտել հայ-ռուսական արդյունավետ փոխըմբռնումն ու դրա հիմքով ռազմավարական բնույթի միասնական որոշումների ընդունումը և, մյուս կողմից, լինել այդպիսի փոխհարաբերություններում առկա թերացումների, բացթողումների հետևանքը: Այսպես, ՀԱՊԿ պետությունների տարածության մեջ այդպես էլ չստեղծվեց ընդհանուր տեղեկատվական տիրույթ, որով կիրականացվեր անվտանգային բնույթի հարցերի լուսաբանումն ու հասարակությունների մակարդակում միասնական մոտեցումների ձևավորումը[8]: Որպես նման տիրույթի և տեղեկատվական աշխատանքի բացակայության հետևանք՝ այսօր տեսնում ենք ՀԱՊԿ առանձին պետությունների կողմնորոշվածություն դեպի այլընտրանքային դաշնակիցներ, որոնք ՀԱՊԿ պետություններից մեկում ընկալվում են որպես բարեկամ, մյուսում՝ թշնամի, ինչը դժվարին է դարձնում այդ պետությունների ռազմավարական-ռազմական անհրաժեշտ փոխգործակցությունը: Սույն հետազոտության խնդիրներից էր՝ Արևմուտք-Ռուսաստան տիրույթում հայաստանցիների համար նախընտրելի կողմնորոշումների մշակութային պատճառների դուրսբերումը, որոնք առնչվում են առօրյա, կենցաղային, մարդկանց միջև փոխհարաբերությունների միկրոմակարդակում ձևավորվող վերաբերմունքի, ընկալումների, կարծրատիպերի հետ: Մասնավորապես, հարցվողներին առաջարկվեց բնութագրել ռուսներին՝ օգտագործելով առավել բնորոշ հավաքական հատկություններ՝ իրենց դրական և բացասական բևեռներով, ինչը թույլ տվեց առավել ճկուն ընտրել այս կամ այն հատկության չափը (գծապատկեր 6).

8 Атанесян, А. В. «Проблемы безопасности информационного поля на пространстве ОДКБ» //ОДКБ и Южный Кавказ: перспективы мира и безопасности в регионе. Материалы международной конференции. Ереван: 2011, сс. 126-140.



Գծապատկեր 6. Ռուս ազգի ներկայացուցիչների բնորոշումներն ըստ հակադիր հատկանիշերի

Ստացված գնահատականներից կարելի է տեսնել, որ հայաստանցիների կողմից ռուսները բնութագրվում են որպես ավելի ժամանակակից, քան՝ ավանդապաշտ, ոչ այնքան աշխատասեր և ոչ անյքան ծույլ, մասամբ՝ վստահելի, ավելի շատ բարոյական, հայաստանցիների համար ավելի շուտ յուրային, քան՝ օտար, ավելի շատ հյուրասեր, հիմնականում կարգապահ, քաջ, բայց և խաղաղասեր,

գրեթե ամբողջությամբ բարյացակամ, օրինապահ, հնարամիտ և կիրթ:

Այլ ազգերի, այդ թվում՝ ռուսների հետ մշակութային հեռավորությունը կարող է արտահայտվել անձնական և գործառնական կապեր ստեղծելու ցանկալիության միջոցով: Համապատասխանաբար, փորձեցինք չափել այլազգիների հետ բիզնեսով զբաղվելու, ընկերություն անելու և ամուսնանալու ցանկալիության մասին հայաստանցիների մոտեցումները՝ համեմատելով մի քանի ազգերի ներկայացուցիչների հանդեպ համապատասխան վերաբերմունքը (գծապատկեր 7).



Գծապատկեր 7. Դրական վերաբերմունքն ընտանիքի անդամի, հարազատի՝ հետևյալ ազգերի ներկայացուցիչների հետ բիզնես անելու, ընկերություն անելու, ամուսնանալու վերաբերյալ..., %)

Եթե գործնական կապերի ստեղծման դրական ընկալումը ենթադրում է վստահություն, ապա ընկերությունն ու առավելևս ամուսնությունը՝ նաև արժեքային նմանություն: Այս իմաստով ստացված տվյալներից կարելի է տեսնել, որ

հայաստանցիների մեծամասնության համար բնութագրական է գործնական և ընկերական կապերի սերտաճում և նմանատիպ տրամադրվածություն. գործնական կապերի իրականացման պատրաստակամությունը գրեթե նույն կերպով ենթադրում է ընկերություն անելու ցանկություն, և հակառակը: Փաստորեն, հայաստանցիների համար բնութագրական է գործնական հարաբերությունների տեղափոխումը ոչ ֆորմալ, ընկերական փոխհարաբերությունների դաշտ, իսկ գործնական հարաբերությունների ստեղծումը ցանկալի է առաջին հերթին հենց ընկերական կապերի հիման վրա:

Գործնական կապերի վստահելիության և արդյունավերության իմաստով հայաստանցիներն առաջին հերթին նախընտրում են ամերիկացիներին, ապա՝ եվրոպացիներին և փոքր տարբերությամբ՝ ռուսներին: Հետաքրքիր է նկատել, որ ամուսնական հարաբերություններ ձևավորելու առումով այս երեք տարբերակներից նախընտրելիությունը տրվում է սկզբից ռուսներին, ապա՝ ամերիկացիներին և եվրոպացիներին, ինչը նշանակում է ռուսների հետ հայերի ավելի փոքր մշակութային հեռավորություն, քան՝ արևմտյան ազգերի հետ:

Գործնական, ինչպես նաև ընկերական հարաբերություններ ձևավորելու և իրականացնելու առումով հայաստանցիների մեծ մասը նախընտրում է նաև իրակցիներին, հնդիկներին, արաբներին և ապա՝ վրացիներին: Այս իմաստով, չնայած Թուրքիայի հետ ՀՀ անկախությունից ի վեր առկա ակտիվ տնտեսական հարաբերությունների, այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրության մակարդակում, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հետպատերազմյան փուլում հայտարարվող մոտեցումների՝ Ադրբեջանի և Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունների զարգացման, ճանապարհների և ենթակառուցվածքների վերականգնման վերաբերյալ, Հայաստանում հասարակության մակարդակում թուրքերին և առավելևս՝ ադրբեջանցիներին չեն համարում նախընտրելի գործընկեր և ընկեր :

Ստացված արդյունքներից ակնհայտ է ամուսնական կապերի ստեղծման հստակ տարանջատում ընկերական և գործնական կապերից, և ամուսնական կապերի հանդեպ ավելի պահանջկոտ, ընտրողական վերաբերմունք:

Կարելի է տեսնել, որ հայաստանցիների մոտ 60% առհասարակ պատրաստ չէ ամուսնանալ այլազգիների հետ, իսկ հասարակության մնացյալ մասի ներկայացուցիչները, ինչպես նշեցինք, դրական են վերաբերվում ամուսնանալուն առաջին հերթին ռուսների, ապա՝ ամերիկացիների և եվրոպացիների հետ: Հարավային Կովկասի տարածաշրջանում և անմիջական հարևանությամբ ապրող ազգերից ամուսնանալու հանդեպ դրական վերաբերմունք նկատվում է վրացի-

ների, ապա՝ իրանցիների հետ, իսկ ադրբեջանցիներն ու թուրքերն այդ իմաստով խիստ բացասական վերաբերմունքի են արժանանում:

Շեշտադրելով այլազգիների հետ ամուսնական հարաբերություններ ստեղծելու հանդեպ վերաբերմունքը՝ տեսնենք, թե ո՞ր սեռի ներկայացուցիչներն են Հայաստանում առավել դրական/բացասական համարում հնարավոր ամուսնությունն այս կամ այն ազգի ներկայացուցչի հետ (գծապատկեր 8) [9].



Գծապատկեր 8. Դրական վերաբերմունքն ընտանիքի անդամի, հարազատի՝ հետևյալ ազգերի ներկայացուցիչների հետ ամուսնանալու վերաբերյալ (ըստ հարցվողների սեռի, %)

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ.

• մշակութային հեռավորությունն այլազգիների հետ կրճատելու առումով հայաստանցի կանայք ավելի ճկուն և բաց են, քան տղամարդիկ,

• ամուսնության առումով նախընտրելի համարվող ռուսների, ապա՝ ամերիկացիների և եվրոպացիների, ինչպես նաև հնդիկների հանդեպ դրական տրամադրված հայ կանայք մոտ 10% ավելի շատ են, քան տղամարդիկ, մինչդեռ այս հարցում պակաս հետաքրքիր համարվող մյուս ազգերի ներկայացուցիչների

9 Վիճակագրական նշանակալի կապ է նկատվել հետևյալ խմբերի ներկայացուցիչների հետ. Հնդիկ՝ X^2=12.963, p<0.001, Cramer's V=-.093; Եվրոպացի՝ X^2=17.595, p<0.001, Cramer's V=-.108; Ամերիկացի՝ X^2=15.050, p<0.001, Cramer's V=-.100; Ռուս՝ X^2=24.799, p<0.001, Cramer's V=-.128:

հանդեպ հայ տղամարդիկ և կանայք վերաբերվում են գրեթե նույն կերպ,

• Հարավային Կովկասի պետությունների հարևանների հետ հայաստանցի-ներն ավելի մեծ մշակութային/արժեքային հեռավորություն են զգում, քան՝ ռուս ների, եվրոպացիների և ամերիկացիների, ինչը խոսում է տարածաշրջանային ինքնության բացակայության մասին:

ՄԱՍ 2. ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԱՐԵՒՄՈՒՏՔ ԲԵՒԵՌՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2021թ. հունիսի 20-ին տեղի են ունեցել ՀՀ Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններ: Այդ ընտրությունները պետք է հստակություն մտցնեին Հայաստանում քաղաքական ուժերի փոխհարաբերություններում, և դիտարկվում էին որպես ելք Արցախյան 44-օրյա պատերազմից հետո ստեղծված քաղաքական ճգնաժամից: Ընտրություններին մասնակցում էին չորս նախընտրական դաշինք և 23 կուսակցություն: Ընտրողների ընդհանուր թիվը՝ 2.595.512 քաղաքացի, քվեարկությանը մասնակցել են 1.281.997 քաղաքացի /49.37 տոկոսը/[10]: Այստեղ պետք է նշել, որ պաշտոնական թիվն ընդգրկում է նաև այն քաղաքացիներին, ովքեր ֆիզիկապես ներկա չեն Հայաստանում:

Բանն այն է, որ շուրջ 30 տարի, հատկապես 90-ական թվականներին, Հայաստանում գրեթե միշտ գրանցվել է միգրացիայի բացասական սալդո: Ինչպես արձանագրել էր Վ.Խոջաբեկյանը, «1990-2000 թվականներին բնակչության բնական աճը նվազել է 6,5 անգամ, դա վկայում է Հայաստանից բնակչության մեծ արտագաղթի մասին», 1991-2000 թվականներին մարդկանց արտահոսքը Հայաստանից կազմել է շուրջ 1 մլն 300 հազ. մարդ[11]:

ՀՀ բազմաթիվ քաղաքացիներ ոչ միայն սեզոնային աշխատանքների են մեկնել արտերկիր, այլ նաև մշտական բնակություն են հաստատել այնտեղ: Հաշվի առնելով սույն սոցիոլոգիական հարցման տվյալները կարող ենք հաշվարկել այդ քաղաքացիների մոտավոր թիվը: Ինչպես ցույց է տվել ստանդարտացված հարցազրույցի միջոցով իրականացված հետազոտությունը, ԱԺ ընտրություններին մասնակցել է ընտրողների 63.8 տոկոսը: Հետևաբար, շուրջ 500000 ՀՀ քաղաքացիներ (ներառյալ սեզոնային աշխատանքների մեկնած միգրանտներին) արդեն շատ երկար ժամանակ բացակայում են Հայաստանից:

ՀՀ իշխանությունները մշտապես փորձել են օգտվել այդ իրողությունից՝ միգ-

10 Տե՛ս https://www.elections.am/Elections/Parliamentary , 19.11.2021

11 Տե՛ս Խոջաբեկյան Վ. (2001) Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Ե., էջ 308-309:

րանտների կողմից Հայաստան ուղղարկվող տրանսֆերտները դիտարկելով որպես կարևոր ֆինանսատնտեսական գործոն: «Տրանսֆերտների աճը բնականաբար դրական է ազդում տնտեսության վրա: Մենք, ըստ էության, այս ամիսների ընթացքում բավականին մեծ տրանսֆերտների ներհոսք ունենք: Այս տարվա ընթացքում մենք տեսնում էինք, որ ԱՄՆ-ից տրանսֆերտների ներհոսքի որոշակի ակտիվացում կար»[12], - 2021 թվականի հունիսին հայտարարել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մ. Գալստյանը: Թե ինչքանով են կարևոր այդ տրանսֆերտները ՀՀ քաղաքացիների համար, վկայում են նաև սույն սոցիոլոգիական հարցման արդյունքները: Այն հարցին, թե «վերջին 3 տարիների ընթացքում Ձեր ընտանիքը ստացել է դրամական փոխանցումներ արտերկրից», ռեսպոնդենտների 39% տվել է դրական պատասխան: Ընդորում, այդ փոխանցումների հիմնական հատվածը եղել է Ռուսաստանից և ԱՄՆ-ից (գծապատկեր 9).



Գծապատկեր 9. Ստացված դրամական փոխանցումների երկրները, %

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները հետևյալ կերպ են բնութագրում հայաստանյան հասարակության քաղաքական մասնակցության մակարդակը ակտիվության/անտարբերության առումով (գծապատկեր 10).

12 Տե՛ս https://b24.am/finance/280638.html, 22.11.2021



Գծապատկեր 10. Հարցվածների քաղաքական մասնակցության դրսևորումները, %

Ըստ ստացված բնութագրիչների՝ հայաստանյան հասարակությունը.

1. շարունակում է առաջին հերթին քաղաքականությանը հետևել ավանդական ԶԼՄ-ներով (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ), չնայած յուրաքանչյուր երրորդ քաղաքացի դրանից արդեն հրաժարվել է,

2. ակտիվորեն սպառում է էլեկտրոնային մեդիայով մատուցվող քաղաքական տեղեկատվությունը (հարցվածների մոտ 60%), ինչը բարձր, աճող թիվ է և միտում ունի մոտ ժամանակ հասնելու, այնուհետև գերազանցելու (փոխարինելու) ավանդական ԶԼՄ-ների սպառումը,

3. չնայած առցանց մեդիայի ակտիվ սպառմանը՝ բնակչության մեծամասնությունը դա անում է պասիվորեն. յուրաքանչյուր տասներորդ բնակիչն է, որ մասնակցում է առցանց քննարկումներին և դրանով որոշակի ազդեցություն ունենում հանրային կարծիքի ձևավորմանը համացանցում,

4. բնակչության միայն 4%-ն է մասնագիտորեն զբաղվում քաղաքական գործընթացների ուսումնասիրությամբ,

5. գրեթե նույն տոկոսն է /4%/ քաղաքական որևէ կուսակցության անդամ: Հաշվի առնելով, որ ըստ ՀՀ Կուսակցությունների մասին օրենքի՝ գրանցման համար կուսակցությունը պետք է ունենա առնվազն 800 անդամ[13], իսկ հետազոտության իրականացման ժամանակահատվածում ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցել է 23 կուսակցություն և 4 կուսակցական դաշինք /ամենազանգվածային կուսակցությունների կազմում/[14], առաջանում է հարց. արդյո՞ք ՀՀ-ում գործող կուսակցությունների և դաշիքների անդամների մի մասն իրապես գոյություն ունի, կամ չի կրում ձևական բնույթ /առնվազն բնակվում է ՀՀ-ում/: Միևնույն ժամանակ, արդյո՞ք ՀՀ միևնույն քաղաքացիները մեկից ավելի կուսակցությունների անդամ չեն հանդիսանում: Այնուամենայնիվ, ստացված արդյունքները վկայում են ՀՀ-ում մեծ թվով կուսակցությունների գոյության պարագայում դրանց վարկանիշի, դրանց հանդեպ վստահության և կուսակցությունների գործունեության մեջ հայաստանցիների մասնակցության ցածր մակարդակի մասին,

6. Չնայած հարցվածների մեծամասնությունը /մոտ 64%/ մասնակցել է 2021թ. ԱԺ արտահերթ ընտրություններին, միևնույն ժամանակ հայաստանցիների մեծամասնությունը /81%/ քաղաքականությունից հիասթափված է ու նշում է, որ դրանով առհասա-րակ չի հետաքրքրվում:

Կարելի է ասել, որ հայաստանյան հասարակությունն այսօր քաղաքականությունից հիասթափված է ու անտարբեր, և իրեն պարբերաբար ներգրավելով այս կամ այն զանգվածային քաղաքական գործընթացում՝ մեծաքանակ և փոքրաթիվ անդամներ ունեցող մեծ և փոքր քաղաքական ուժերը դարձյալ չեն ստանում վստահության, աջակցության էական և տևական մասնաբաժին՝ առաջնորդվելով իրավիճակային մոտեցումներով:

13 Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքը կուսակցությունների մասին, ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docID=110534

14 https://res.elections.am/images/doc/nomination20.06.21.pdf



Գծապատկեր 11. Հանրային վստահությունն ինստիտուցիոնալ կառույցներին, %

ՀՀ քաղաքական դաշտի նկատմամբ դիրքավորվածության առումով հարցման մասնակիցներին պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական խմբի. «իշխանության կողմնակիցներ», ովքեր լիովին վստահում են «թավշյա հեղափոխության» հետևանքով ձևավորված իշխանությանը (27%), «իշխանությունը հանդուրժողներ», ովքեր որոշ չափով են վստահում (37%), «իշխանության հակառակորդներ», ովքեր չեն վստահում իշխանությանը (36%): Յուրաքանչյուր խմբի մասնակցությունը ԱԺ ընտրություններին հետևյալն էր. 74%, 62% և 60% համապատասխանաբար:

Իշխանություններին լիովին վստահող քաղաքացիներին ըստ իրենց կրթական մակարդակի կարելի է առանձնացնել հետևյալ քանակական համամասնությամբ. 20% ունի բարձրագույն կրթություն, 26%՝ միջին մասնագիտական կրթություն, 48%՝ միջնակարգ, 5%՝ անավարտ միջնակարգ կրթություն, 1%՝ այլ կրթա-

կան մակարդակ: Իսկ իշխանություններին չվստահող հարցվածների համամասնությունն այլ է. 38% բարձրագույն կրթությամբ է, 22%՝ միջին մասնագիտական կրթությամբ, 34%՝ միջնակարգ, 3%՝անավարտ միջնակարգ, 2% ունի գիտական աստիճան: Այստեղ ակնհայտ է կոռելյացիոն կապ քաղաքացիների ստացած կրթության և իշխանություններին վստահելու մակարդակի միջև. որքան բարձր է կրթական մակարդակը, այնքան նվազ է իշխանություններին վստահելու հակվածությունը:

Նման կապ է բացահայտվել նաև երևանաբնակ և մարզաբնակ ռեսպոնդենտների պատասխաններում. երևանցիները իշխանություններին չվստահող բնակիչների 47% են կազմում, իսկ լիովին վստահողների՝ 26%: Կարող ենք արձանագրել, որ ուրբանացման մակարդակը պայմանավորում է քաղաքական իրողություններն ավելի քննադատաբար դատելու մարդկանց ունականությունները:

Վստահության մակարդակն էլ իր հերթին ազդում է միգրացիոն վարքի ակտիվացման վրա: Իշխանություններին չվստահողների 27% հակված է արտագաղթել Հայաստանից: Համեմատության համար նշենք, որ իշխանություններին լիովին վստահողների և մասամբ վստահողների պարագայում այդպիսի հակվածություն դրսևորողների մասնաբաժինները պոտենցիալ արտագաղթողների մեջ կազմում են համապատասխանաբար 11% և 17%:

Կարելի է ասել, որ չնայած քաղաքական բնույթի տեղեկատվության սպառմանն առաջին հերթին ավանդական ԶԼՄ-ներով՝ հայաստանցիների կեսից ավելին առնվազն հայկական ԶԼՄ-ներին չի վստահում, և է՛լ ավելի քիչ են վստահում սոցիալական ցանցերին: Նրանք, ովքեր չեն վստահում Հայաստանի ԶԼՄ-ներին /հարցվածների 55.5 տոկոսը/ ավելի ակտիվ են եղել ԱԺ ընտրություններին մասնակցության առումով, քան նրանք, ովքեր լիովին վստահում են ԶԼՄ-ներին: Առաջինները, անշուշտ, ավելի են հակված քննադատական մտածողության հիման վրա կառուցել սեփական քաղաքական վարքագիծը: Իհարկե, վստահությունը ինքնին չի հանգեցնում քաղաքական աբսենտիզմի: Այստեղ ավելի հավանական է, որ գործ ունենք հակառակի հետ. քաղաքական անտարբերությունն է հանգեցնում ավելորդ վստահությանը:

Ինչպես նախկինում, այնպես էլ 2020թ. աշնանը տեղի ունեցած պատերազմի ու հետպատերազմական իրողությունների պայմաններում Հայկական բանակը շարունակում է ունենալ հայաստանցիների մեծ մասի վստահությունը:

Բացի դրանից, լիովին վստահելու առումով առաջատարն է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն ի դեմս Ա. Թաթոյանի, ում որոշակիորեն զիջում է 2018թ.-ի «Թավշյա հեղափոխությունից» հետո ձևավորված ՀՀ իշխա-

նությունը, ապա՝ համավարակի պայմաններում գործող ՀՀ առողջապահական համակարգը:

Փորձելով հասկանալ, թե ինչպիսի առանձնահատկություններ ունեն քաղաքականապես ակտիվ և պասիվ, այս կամ այն տեղեկատվական-հաղորդակցական միջոցներ սպառող հայաստանցիների հայացքները Ռուսաստան-Արևմուտք բևեռացման մեջ Հայաստանի անհրաժեշտ դիրքավորման վերաբերյալ, ստացել ենք հետևյալ պատկերը (գծապատկեր 12)[15].



Գծապատկեր 12. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը (ըստ հարցվածների քաղաքական ակտիվության, %)

Գծապատկերից կարելի է տեսնել, որ քաղաքական կուսակցության անդամ հանդիսացողները փոքր-ինչ ավելի ակտիվ են և՛ ռուսամետության, և արևմտամետության առումով, ինչը կարող է բնութագրել նաև Հայաստանի կուսակցական համակարգի բևեռացման միտումը: Նույնը կարելի է ասել 2020թ. ԱԺ արտահերթ ընտրություններին մասնակցած քաղաքացիների պատկերացումների մասին: Մինչդեռ, կարելի է տեսնել, որ քաղաքական պասիվություն ցուցաբերողների հայացքները պակաս հստակ են, և չնայած ռուսամետության որոշակի

15 Ման-Ուիտնի Յու վիճակագրական թեստը ցույց է տալիս նշանակալի վիճակագրական կապ հատկապես 2021 թվականի ԱԺ ընտրությունների մասնակցածների դեպքում. U = 236.989; p=0:028:

գերակայությանն արևմտամետության համեմատ, երևում է նաև Արևմուտքի ու Ռուսաստանի միջև որոշակի միջանկյալ դիրք զբաղեցնելու ցանկության դրսևորում: Նույնը կարելի է ասել քաղաքականությամբ մասնագիտորեն հետաքրքրվողների դեպքում, ովքեր, ըստ ստացված արդյունքների, ունեն առավել ռուսամետ և նվազագույն արևմտամետ հայացքներ՝ համեմատած այլ հարցվածների հետ:

Ինչ վերաբերում է տեղեկատվական-հաղորդակցական միջոցների սպառմանը, ապա ստացվել է հետևյալ պատկերը[16].



Գծապատկեր 13. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը (ըստ բնակիչների՝ ԶԼՄ սպառելու, %)

Կարելի է տեսնել, որ ավանդական ԶԼՄ-ներով (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ) քաղաքականությանը հետևող բնակիչներն ավելի ռուսամետ են, քան՝ էլեկտրոնային մեդիա սպառողները, մինչդեռ սոցիալական ցանցերում ակտիվ քննարկումներին մասնակցողներն առավելապես արևմտամետ են, ինչը նշանակում է, որ վիրտուալ հաղորդակցությունների քիչ կառավարվող տիրույթում

16 Ման-Ուիտնի Յու վիճակագրական թեստը ցույց է տալիս նշանակալի վիճակագրական կապ քաղաքական իրադարձություններին էլեկտրոնային մեդիայով հետևողների դեպքում. U = 227.816; p<0:001; քաղաքական իրադարձություններին զանգվածային լրատվամիջոցներով հետևողների դեպքում. U = 290.823; p<0:001 և սոցիալական ցանցերում քաղաքական քննարկումներին մասնակցողների դեպքում. U = 83.845; p<0:001:

շրջանառվող տեղեկատվությունն ու հանրային տրամադրություններն ավելի հակառուսական բնույթ են կրում, քան՝ ավանդական ՁԼՄ-ներով ներկայացվող տեղեկատվությունը: Միակողմանի կլիներ եզրակացնել, որ առցանց տեղեկատվահաղորդակցական հոսքերն առավել ազատական են և այդ պատճառով՝ օբյեկտիվ և զերծ քարոզչությունից: Ընդհակառակը՝ առցանց մեդիայով և սոցիալական ցանցերով տեղեկատվություն շրջանառողների մի մասն իրականացվում է կեղծ աղբյուրներից (fake profile) և ունի իրականությանը չհամապատասխանող, կեղծ նորությունների (fake news) բնույթ: Համացանցի ցածր վերահսկելիությունը թույլ է տալիս հայաստանցիների հանրային ընկալումներն ու տրամադրություններն ուղղորդել ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ արտերկրում գործող և հատուկ այդ նպատակներով ստեղծվող աղբյուրներից, այդ թվում՝ ՀՀ շահերին վնասելով: Ուստի սոցիալական ցանցերում քննարկումներին ակտիվ մասնակցողների գերակշռող արևմտամետությունը կարող է ունենալ ոչ թե անձնական քաղաքական կողմնորոշման բնույթ, այլև լինել համապատասխան քարոզչության, ուղղորդվածության հետևանքը:

Միևնույն ժամանակ, որոշեցինք պարզել, թե որքանով է սոցիալական ցանցերում ակտիվ լինելու հետ կապված արևմտամետությունը հենված սոցիալական ցանցերի հանդեպ վստահության մակարդակի հետ. այլ կերպ ասած՝ ինչպես է սոցիալական ցանցերում շրջանառվող տեղեկատվության հանդեպ մարդկանց վստահության մակարդակն ազդում իրենց ռուսամետության կամ արևմտամետության վրա (գծապատկեր 14).



Գծապատկեր 14. Արևմուտք-Ռուսաստան բաժանման մեջ Հայաստանի ցանկալի կողմնորոշումը (ըստ հարցվածների՝ սոցիալական ցանցերի հանդեպ վստահության, %)

Չնայած ընդունված պատկերացման և սույն հետազոտությամբ հաստատված փաստի, որ սոցիալական ցանցերում ակտիվ հաղորդակցվողների խմբում շրջանառվում են ավելի հակառուսական և արևմտամետ հայացքներ, ստացված արդյունքները ցույց են տալիս նաև, որ սոցիալական ցանցերին վստահելու մակարդակը գրեթե չի պայմանավորում հակառուսականությունն ու արևմտամետությունը: Ավելին՝ նկատելի է, որ սոցիալական ցանցերին լիովին վստահող հայաստանցիներն անգամ ավելի ռուսամետ են և պակաս արևմտամետ, քան սոցիալական ցանցերի հանդեպ վստահության ավելի ցածր մակարդակ ունեցողները: Սա կարող է նշանակել, որ.

1. սոցիալական ցանցերում տեղի ունեցող տեղեկատվահաղորդակցական գործընթացը միանշանակ հակառուսական և արևմտամետ չէ, և սոցցանցերի գործունեության սահմանափակումը էապես չի ազդի այդպիսի հայացքների փոփոխության վրա, դրանք ունեն այլ, ավելի խորքային բնույթ,

2. սոցիալական ցանցերում ակտիվ հաղորդակցվող և միաժամանակ արևմտամետ քաղաքացիները սոցիալական ցանցերին և նման հաղորդակցմանը գրեթե չեն վստահում, ինչը նաև նվազեցնում է այդպիսի մարդկանց կողմից սոցիալական ցանցերում շրջանառվող նյութերի արժանահավատության աստիճանը: Այլ կերպ ասած, սոցիալական ցանցերում արևմտամետություն շրջանառողների մի մասն ինքը չի վստահում ոչ սոցիալական ցանցերին, ոչ էլ՝ սեփական հաղորդագրություններին, և զբաղվում է հստակ քարոզչությամբ:

Սույն հետազոտության շրջանակներում կարևորվող հարցերից է, թե ինչպիսին է 2018թ. գարնանը տեղի ունեցած "Թավշյա հեղափոխության" արդյունքում ձևավորված ՀՀ իշխանություններին աջակցող հայաստանցիների վերաբերմունքը Ռուսաստանի և Առևմուտքի ուղղությամբ Հայաստանի անհրաժեշտ կողմնորոշմանը, այլ խոսքերով՝ ովքեր են Ն. Փաշինյանի կառավարությանն աջակցող հայաստանցիները՝ ռուսամե՞տ, թե՞ արևմտամետ: Տեսնենք դա գծապատկեր 15-ում[17].

17 Առկա է վիճակագրական նշանակալի կապ՝ X^2=21.431, p<0.001, Cramer's V=.086:



Գծապատկեր 15. ՀՀ հետհեղափոխական կառավարության հանդեպ վստահությունն ու Ռուսաստան-Արևմուտք կողմնորոշումը, %

Ստացված արդյունքները որոշակիորեն փոխում են ձևավորված և հիմնականում ռուսալեզու ՁԼՄ-ներով տարածվող այն կարծրատիպը, թե ՀՀ-ում տեղի ունեցած "Թավշյա հեղափոխության" արդյունքում իշխանություն ստանձնած խումբն իշխանության եկավ և շարունակում է քարոզել հակառուսականություն՝ ունենալով նաև համապատասխան ընտրազանգված: Ինչպես տեսնում ենք գծապատկերից՝ հետհեղափոխական իշխանություններին սատարող և չսատարող հայաստանցիների ռուսամետությունն էապես չի տարբերվում և, ինչպես արդեն նշվել է, չնայած վերջին տարիներին ընդհանուր առմամբ նվազել է, այնուամենայնիվ շարունակում է ավելի տարածված լինել, քան արևմտամետությունը:

Միևնույն ժամանակ, ՀՀ իշխանություններին սատարողների շարքում արևմտամետությունն ավելի տարածված է, քան՝ իշխանություններին չաջակցողների մոտ: Սակայն, այս իմաստով հատկանշական է ՀՀ իշխանությունների հանդեպ ոչ միանշանակ վերաբերմունք ունեցողների խումբը, ովքեր փաստորեն պակաս ռուսամետ են և ավելի արևմտամետ, քան և՛ փաշինյանականները, և հակափաշինյանականները: Այս խումբը ՀՀ-ում առկա, 2020թ. ԱԺ արտահերթ ընտրություններում չհաղթած, հիմնականում արևմտամետ և ընդգծված հակառուսական դիրքորոշումներ արտահայտող քաղաքական ուժերի համար պոտենցիալ ընտրազանգված է, ովքեր լիովին բավարարված չեն ո՛չ ներկայիս իշխանությունների գործելակերպով, ո՛չ էլ՝ նախկին իշխանական շրջանակների ներկայացուցիչնե-

ից ձևավորված և ԱԺ ընտրված ընդդիմությունից: Հետհեղափոխական իշխանությունների դիրքերի անխուսափելի թուլացումը կարող է բերել ոչ թե ներկայիս առաջատար ընդդիմության վերելքին, այլ հենց երրորդ ուժերի ընդլայնմանն ու, փաստորեն, իրենց կողմից հակառուսական հռետորաբանության ներբերմանը քաղաքական օրակարգ:

ՄԱՍ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ԹՇՆԱՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՂԱԴԱՇՏՈՒՄ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՎՈՂ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

Այժմ դիտարկենք, թե ինչպիսին է հայաստանցիների վերաբերմունքը տարածաշրջանային պետությունների, այդ թվում՝ դաշնակից Ռուսաստանի հանդեպ (գծապատկեր 16):



Գծապատկեր 16. Տարածաշրջանային քաղաքականության մեջ ներգրավված պետությունների ընկալումը թշնամի-բարեկամ առումով, մաս 1, %

Փաստորեն, չնայած ՌԴ հետ ՀՀ ռազմավարական, դաշնակցային և բարեկամական հարաբերությունների, ինչպես նաև ՌԴ առանձնահատուկ դերակատարմանը ՀՀ անվտանգության հիմնահարցերում, հայաստանցիների տրամադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանի՝ որպես բարեկամ երկրի կերպարը գրեթե նույնն է, ինչ՝ Իրանի Իսլամական Հանրապետության (47,1% և 45.3% համապատասխանաբար): Միևնույն ժամանակ, ՌԴ հանդեպ քննադատական վերաբերմունքն ու Ռուսաստանի մասին պատկերացումը՝ որպես թշնամու, ավելի տարածված է, քան՝ նմանատիպ վերաբերմունքն Իրանի հանդեպ (12,9% և 4.2% համապատասխանաբար): Վրաստանի հանդեպ վերաբերմունքում էապես գերակայում է չեզոքությունը՝ այն ոչ բարեկամ է, ոչ էլ թշնամի:

Ադրբեջանի և Թուրքիայի՝ որպես միանշանակ թշնամական պետությունների, հանդեպ հանրային կարծիքը գրեթե նույնական է:

Կարևոր է նշել, որ վերջին տասնամյակում ՌԴ հանդեպ հայաստանցիների վստահության մակարդակը մշտապես նվազել է, ինչը երևում է նաև պարբերաբար իրականացված հետազոտությունների արդյունքներից (գծապատկեր 17)[18]:



Գծապատկեր 17. Հայաստանցիների վստահության մակարդակը տարածաշրջային քաղաքականության մասնակիցներին, %

18 Տվյալները վերցված են CRRC Հայաստան կասմակերպության կողմից իրականացված հետազոտությունների արդյունքներից, https://www.crrc.am/wp-content/themes/crrc/barometer_files_hy/%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-2017.pdf

Միևնույն ժամանակ, ՌԴ որպես թշնամական մասին պատկերացումները մշտապես կրել են փոքրաթիվ, մարգինալ բնույթ՝ չգերազանցելով 2%-ը (գծապատկեր 18)[19]:



Գծապատկեր 18. Հայաստանցիների պատկերացումները թշնամի պետությունների վերաբերյալ, %

Փաստորեն, եթե ՌԴ՝ որպես բարեկամ պետության մասին կարծիքը վերջին տասնամյակում մշտապես նվազել է, ինչը կարելի է բացատրել մի շարք գործոններով, այդ թվում՝ ՌԴ, Թուրքիայի և Ադրբեջանի միջև փոխհարաբերությունների ընթացիկ զարգացումներով, դրանց ռազմավարական բնույթով և ՀՀ անվտանգության համար այդ զարգացումների սպառնացող բնույթով[20], ապա ՌԴ՝ որպես թշնամական երկրի մասին ընկալումները կտրուկ աճել են հենց վերջին տարիներին:

2021թ. հունիսին տեղի ունեցած ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցած 7 քաղաքական կուսակցություններ (աղյուսակ 2) բացահայտ հանդես եկան հակառուսական դիրքերից, և չնայած որ դրանցից ոչ մեկը չհաղթահարեց ԱԺ-ում

19 Նույն աղբյուրից:

20 Атанесян А.В., Челпанова Д.Д. (2021) Фактор влияния постпротестных политических элит Армении на армяно-российские взаимоотношения: проблемы, возможности и риски // Общественные науки и современность. № 4. С.116–131. DOI: 10.31857/S086904990015657-4. URL: https://ons-journal.ru/s086904990015657-4-1/

հայտնվելու համար անհրաժեշտ 5% շեմը, այնուամենայնիվ, բոլորը միասին հավաքեցին 8% ավելի ընտրածայներ: Այսինքն՝ եթե այդ քաղաքական միավորումները հանդես գային որպես մեկ միասնական դաշինք, ապա ՀՀ ԱԺ-ում կհայտնվեին բացահայտորեն հակառուսական քարոզչություն իրականացնողներ: Այնուամենայնիվ, նման միտումը հնարավոր եղավ հենց վերջին տարիներին ՌԴ՝ որպես դաշնակցի մասին հանրային ընկալումների նվազման ֆոնի վրա, ինչը հետագայում նման զարգացումների ռիսկեր է պարունակում:

Աղյուսակ 2. 2021թ. հունիսին ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցած հակառուսական քարոզչությամբ 7 քաղաքական կուսակցություններ, %

	ԱՆՎԱՆՈՒՄ	ՍՏԱՑԱԾ ԸՆՏՐԱԶԱՅՆԵՐ
1	«Հանրապետություն» կուսակցություն	3.03
2	Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք	1.5
3	Ազգային ժողովրդավարական բևեռ համահայկական կուսակցություն	1.49
4	«Ազատական» կուսակցություն	1.17
5	«Ազատ Հայրենիք» դաշինք	0.32
6	«Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն	0.31
7	Հայաստանի Եվրոպական կուսակցություն	0.19

Պետք է նկատի ունենալ, որ հակառուսական տրամադրություններ ունեցող ընտրազանգվածի մի մասն էլ քվեարկել է այլ քաղաքական ուժերի օգտին: Կարող ենք արձանագրել, որ Հայաստանում արդեն նկատելի է արտաքին քաղաքական կողմնորոշման փոփոխության որոշակի միտում: Այդ միտման վկայությունն է այն, որ սոցիոլոգիական հարցման մասնակիցների 13% Ռուսաստանը համարում է թշնամի երկիր: Իսկ Արևմուտք-Ռուսաստան երկբևեռ առանցքի վրա հարցվածների 18% է աներկբա դիրքավորվում որպես արևմտամետ: Եվս 10% ավելի է հակված դեպի Արևմուտք, քան դեպի Ռուսաստան: Դա, իհարկե, նոր իրողություն է: Ընդորում, **«Թավշյա հեղափոխության» արդյունքում ձևավորված իշխանությանը լիովին վստահող հարցվածների** 61% է Ռուսաստանին համարում բարեկամ երկիր, իսկ չվստահող ռեսպոնդենտների միայն 39% է այդպես կարծում: Այս հարցում իր ազդեցությունն ունի նաև ռեսպոնդենտների կրթական մակարդակը. բոլոր հարցվածների 37% կազմող միջնակարգ կրթություն ունեցողների 51% է Ռուսաստանը համարում բարեկամ երկիր, իսկ հարցման մասնակիցների 35% կազմող բարձրագույն կրթություն ունեցողների՝ 37%:

Հետազոտության արդյունքում ստացված տեղեկություններից կարելի է տեսնել նաև Վրաստանի հանդեպ հանրային վերաբերմունքի բևեռացումը: Մի կողմից, նախորդ տարիների համեմատ Վրաստանի՝ որպես բարեկամ պետության հանդեպ վերաբերմունքի աճը կարող է բացատրվել 2020թ-ի ռազմաքաղաքական իրադարձությունների պայմաններում Վրաստանի միջնորդական արդյունավետ փորձով՝ Ադրբեջանից հայ ռազմագերիների վերադարձի հարցում[21]: Մյուս կողմից, նկատելի է Վրաստանի՝ որպես բարեկամ, քրիստոնյա, հարևան երկրի հանդեպ հայաստանցիների գերագնահատված սպասումների չարդարացվածությամբ պայմանավորված հիասթափությունը, որը կարող է կապված լինել պատերազմին զուգորդած Covid-19 համավարանի պայմաններում Վրաստանի ցամաքային սահմանը Հայաստանի հետ փակելու որոշման հետ: Հայաստանի հետ Վրաստանի ցամաքային սահմանի փակումը դժվարեցրել էր պատերազմի ընթացքում արտերկրից հայկական կողմին հումանիտար օգնության մատակարարումը:

Նախորդ տարիների համեմատ Իրանի Իսլամական Հանրապետության՝ որպես բարեկամական պետության հանդեպ վերաբերմունքի կտրուկ աճը բացատրելի է 2020թ. ռազմաքաղաքական իրադարձությունների պայմաններում Իրանի կոշտ դիրքորոշմամբ Ադրբեջանի և Թուրքիայի միասնական ռազմական գործողությունների հանդեպ: Նման կոշտ դիրքորոշումը, հնչեցվելով ԶԼՄ-ներում, պարբերաբար ավելի կոշտ է հնչել, քան ԵՄ, ԱՄՆ և առավելևս դաշնակից հանդիսացող ՌԴ հայտարարությունները, ինչը չէր կարող հայաստանցիների մոտ Իրանի հանդեպ դրական վերաբերմունք չստեղծել: Միևնույն ժամանակ, Իրանի իշխանությունների կոշտ հայտարարություններն ու զգուշացումները Ադրբեջանի և Թուրքիայի հասցեին պայմանավորված էիր ոչ թե Հայաստանին և Ղարաբաղին օգնելու, այլև հինգ հիմնական պատճառներով.

1. Իրանը շահագրգռված է, որ իր անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները ֆիզիկական և իրավական առումով չանցնեն Ադրբեջանի և Թուրքիայի վերահսկողությանը

2. Իրանը դիտում է Թուրքիայի ընդլայնումը տարածաշրջանում և իսլամական աշխարհում Թուրքիայի առաջնորդական հավակնությունները՝ որպես հակասող իր անվտանգային շահերին,

3. Ադրբեջանի համագործակցությունն Իսրայելի հետ Իրանը դիտում է որպես ուղղված իր շահերի դեմ, և նման համագործակցության արդյունքում ռազմական հաղթանակները՝ որպես անցանկալի,

21 https://www.azatutyun.am/a/31304702.html

4. Թուրքիայի և Ադրբեջանի կողմից ղարաբաղյան պատերազմում օգտագործված իսլամիստական ահաբեկիչների ներկայությունն իր անմիջական հարևանությամբ Իրանի համար անընդունելի է,

5. Ադրբեջանի կողմից Ղարաբաղում կիրառված զենքի և զինամթերքի մի մասն ընկնում և պայթում էր Իրանի սահմանամերձ տարածքում՝ խախտելով Իրանի սահմանը, սպառնալով բնակչությանն ու ենթակառուցվածքներին, մարտահրավեր նետելով Իրանին:

Այնուամենայնիվ, 2020թ. պատերազմական իրադարձությունների պայմաններում Թուրքիայի, Ադրբեջանի և Իսրայելի հասցեին Իրանի կողմից արված կոշտ հայտարարություններն ու զգուշացումները նպաստեցին հայաստանյան հասարակության մեջ Իրանի՝ որպես բարեկամի հանդեպ հանրային կարծիքի էական աճին՝ գրեթե հավասարեցնելով այդ պետության՝ որպես բարեկամի կերպարը հետզհետե նվազող ՌԴ բարեկամական կերպարին:

Դիտարկենք նաև ՀՀ համար կարևոր այլ պետությունների կերպարի ընկալումը թշնամի-բարեկամ տիրույթում (գծապատկեր 19).



Գծապատկեր 19. Տարածաշրջանային քաղաքականության մեջ ներգրավված պետությունների ընկալումը թշնամի-բարեկամ առումով, մաս 2, %

Դիտարկելով ստացված տեղեկատվությունը՝ կարելի է գալ մի քանի եզրակացությունների: Նախևառաջ, Ֆրանսիայի՝ որպես Հայաստանի և հայության բա-

րեկամի, մասին պատկերացումները ոչ միայն կրկին անգամ հաստատվում են, այլև այս անգամ արդեն զգալիորեն գերազանցում են Ռուսաստանի մասին համանման պատկերացումները (Ֆրանսիային Հայաստանի բարեկամ է համարում հարցվածների 84,2%, Ռուսաստանին՝ 47,1%): Ավելին. եթե Ռուսաստանը թշնամական երկիր համարողների թիվը Հայաստանում կտրուկ աճել է, ապա Ֆրանսիայի հանդեպ բացասական վերաբերմունք ունեցողների տոկոսն էապես փոքր է (12.9% համեմատած 0,8%-ի հետ):

Բացի Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող պատմական իրադարձություններից, որոնցում Ֆրանսիան խաղացել է կարևոր հայանպաստ դերակատարում, այդ երկրում հայկական գործուն համայնքի կարևոր դերից, դրական ազդեցություն ունեցավ նաև 2020թ. աշնանը ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում Ֆրանսիայի նախագահի և արտաքին գործերի նախարարի հայտարարություններն առ այն, որ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայկական զինված ուժերի և խաղաղ բնակչության դեմ օգտագործվում են իսլամիստ և ջիհադիստ վարձկաններ՝ Մերձավոր Արևելքի երկրներից, ինչն է՛լ ավելի է ապակայունացնում տարածաշրջանն ու ստեղծում ռազմական սպառնալիքներ հատկապես խաղաղ հայ բնակչության հանդեպ[22]:

Օբյեկտիվության համար պետք է նշել, որ նման հայտարարություններով հանդես էր եկել նաև Ռուսաստանի ղեկավարությունը՝ ի դեմս ՌԴ Արտաքին հետախուզության ծառայության տնօրենի[23]: Միևնույն ժամանակ, չի բացառվում, որ ՌԴ՝ որպես ռազմավարական դաշնակցի դերակատարման հետ կապված հայաստանցիներն ավելի մեծ հույսեր էին կապել, քան՝ Ֆրանսիայի, ուստի և հիասթափվածության ավելի խոր զգացումը կտրուկ ազդեց հենց ՌԴ վարկանիշի անկման վրա:

Հայաստանցիների պատկերացումներում Ֆրանսիայի՝ որպես առավել հեղինակավոր դաշնակից երկրի կերպարը նաև կապված է Ֆրանսիայի իշխանությունների կողմից ֆրանսահայ համայնքի դերակատարման կարևորության հետ: Ֆրանսիայի իշխանությունների քաղաքական հայտարարություններն ու քայլերն ավելի հաճախ ու բացահայտ են արձագանքում ֆրանսահայ համայնքի պահանջներին, քան՝ ՌԴ իշխանությունների գործելակերպի և հռետորաբանության դեպքում՝ Ռուսաստանում հայկական մեծաթիվ համայնքի պահանջների առնչությամբ: Չի բացառվում, որ պատճառներից է ՌԴ-ում հայկական համայնքի պակաս կազմակերպված, արդյունավետ, հետևողական, իշխանական լծակների

22 https://mirrorspectator.com/2020/12/03/france-tells-turkey-to-remove-mercenaries-from-karabakh/
23 https://ria.ru/20201023/turtsiya-1581068745.html

և ՀԼՄ-ների հետ արդյունավետորեն համագործակցող, պետականամետ լինելն է, քան՝ Ֆրանսիայում[24]: Բացի այդ, ՌԴ-ում հայկական համայնքի արդյունավետության և հեղինակության մակարդակը ակնհայտորեն խնդրահարույց է՝ Ռուսաստանում ադրբեջանական համայնքի գործունեության և ներկայացվածության հետ համեմատ:

ԱՄՆ հանդեպ հանրության դրական վերաբերմունքը նախորդ տարիներին դանդաղորեն աճել է՝ ՌԴ հանդեպ դրական վերաբերմունքի դանդաղ անկմանը զուգընթաց: Սակայն սույն հետազոտությամբ ստացված արդյունքները վկայում են ԱՄՆ՝ որպես բարեկամանակ պետության, վարկանիշի էական աճի մասին (38.3%), իսկ հարցվածների կեսից ավելին այն չեզոք պետություն է համարում, մինչդեռ փաստացի ԱՄՆ-ն, որպես գերպետություն, երբեք չեզոք դիրքորոշում չի ունեցել, առավելևս՝ հետխորհրդային տարածաշրջաններում: Հետաքրքիր է նաև, որ 2020թ. աշնան ռազմական գործողությունների պայմաններում ԱՄՆ արձագանքը եղել է հայանպաստ լինելուց շատ հեռու և գրեթե բացակայել է, ինչը պայմանավորված էր ԱՄՆ նախագահական ընտրությունների նախապատրաստման և իրականացման կարևոր հանգամանքով: Շատ կարևոր է դիտարկել Ղազախստանի և Բելառուսի հանդեպ հանրային վերաբերմունքը՝ որպես ՀԱՊԿ անդամ պետությունների: Այդ երկու պետությունները ՀԱՊԿ-ում ՌԴ-ից հետո ամենաազդեցիկներն են, և դրանցից է կախված ՀԱՊԿ՝ որպես հավաքական անվտանգային կազմակերպության գոյությունն ու արդյունավետությունը, հակառակ պարագայում պետք է խոսել հայ-ռուսական երկկողմանի անվտանգային համագործակցության՝ որպես միակ արդյունավետ ձևաչափի մասին: Եվ փաստորեն, այդ երկու պետությունների հետ միասնական անվտանգային կազմակերպության անդամ լինելով՝ Հայաստանի բնակչության միայն 10%-ն է համարում բարեկամ , իսկ փոքր-ինչ ավելին՝ անգամ թշնամի: Տվյալ պարագայում մեծամասնության կարծիքով այդ պետությունների չեզոք վերաբերմունքը նույնպես կարող է որակավորվել որպես ոչ բարեկամական, քանի որ ՀԱՊԿ-ի անդամների՝ համատեղ ուժերով միմյանց պաշտպանելու պատրաստակամությունը յուրաքանչյուր պետության տեսանկյունից ենթադրում է միտվածություն դեպի մյուս անդամ-պետության շահերի ըմբռնումն ու պաշտպանությունը, այսինքն՝ ոչ չեզոքություն: Փաստորեն, հայաստանցիների ընկալումներում ՀԱՊԿ-ի ձևաչափով անդամ-պետություններից հայամետությունը չի երևում:

ՀԱՊԿ-ի արդյունավետության խնդրահարույց լինելը երևում է նաև ստաց-

24 Ֆրանսիայի նախագահի պաշտոնին հավակնող ևս մեկ գործիչ ժամանել է Հայաստան: Ազատություն ռադիոկայան, 22.12.2021. https://www.azatutyun.am/a/31621149.html

ված արդյունքներից առ այն, թե անվտանգային ո՞ր կազմակերպության ձևաչափումը Հայաստանն ավելի պաշտպանված կլիներ (գծապատկեր 20):



Գծապատկեր 20. Անվտանգային կազմակերպություններում ՀՀ անդամակցման հեռանկարայնությունը, %

Կարելի է տեսնել, որ հայաստանցիների համարյա մեկ երրորդն է ՀԱՊԿ-ը Հայաստանի անվտանգության ապահովման առումով հեռանկարային համարում (փաստորեն՝ ոչ թե ՀԱՊԿ մյուս անդամների, այլ Ռուսաստանի հաշվին), մինչդեռ փոքր-ինչ ավելի մեծ են հույսերը՝ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության առումով, չնայած որ Հայաստանի՝ ՆԱՏՕ անդամակցման հարցը երբեք չի բարձրացվել ո՛չ ՆԱՏՕ շրջանակներում, ոչ էլ, համապատասխանաբար, ՀՀ ղեկավարության կողմից, իսկ ՆԱՏՕ հետ ՀՀ համագործակցության նոր ծրագրեր նույնպես չեն առաջարկվել:

Կարելի է ասել, որ հայաստանցիների հույսերը՝ ՆԱՏՕ-ի հետ կապված, հակադարձում են հիասթափության աճը ՀԱՊԿ-ում անդամակցության առումով, և այլ կայուն հիմքեր չունեն: Կարող ենք տեսնել, որ հայաստանյան հասարակության մեջ առկա է էական հատված, որի ներկայացուցիչները կողմնորոշված են դեպի սեփական ջանքերով իրենց անվտանգության ապահովումը, և հույսը չեն դնում այլոց վրա: Ամեն դեպքում, այդ սեգմենտը քանակությամբ երկու անգամ փոքր է արտաքին սուբյեկտներից Հայաստանի անվտանգության պաշտպանությունն ակնկալողներից:

Գծապատկեր 20-ից կարելի է տեսնել նաև, որ հայաստանցիների պատկերացումներում բարեկամ, կամ առնվազն չեզոք պետություններ են Հնդկաստանն ու Չինաստանը, ինչը պայմանավորված է այդ պետությունների հետ առկա տնտեսական կապերով (նաև՝ ստացվող տնտեսական աջակցությամբ), միջանձնային

հարաբերությունների մակարդակում ակտիվ շփումներով և փոխըմբռնմամբ, ՌԴ հետ այդ պետությունների ռազմավարական բնույթի համագործակցությամբ:

ՀՀ անկախության ձեռքբերումից ի վեր պետականության կառուցման բոլոր ոլորտներում (հատկապես՝ բանակաշինության գործում) Իսրայելը համարվել է օրինակելի, խիստ արդյունավետ պետություն, և Հայաստանում մշտապես կառուցվել է Իսրայելի դրական կերպարը: Այս իմաստով Իսրայելի հանդեպ հայաստանցիների վերաբերմունքի կտրուկ վատթարացումը պետք է բացատրել հենց վերջին ժամանակահատվածում Իսրայելի դերակատարմամբ ղարաբաղյան հակամարտության գործընթացում՝ Ադրբեջանին արդիական զենքով և զինամթերքով ապահովելու, տեղեկատվական դաշտում ադրբեջանամետ դիրքորոշում ստանձնելու հանգամանքով:

Անշուշտ, Իսրայելում գտնվող առանձին մասնագիտական խմբեր և անհատներ, այդ թվում՝ գիտության և մշակույթի գործիչներ, 2020թ. ղարաբաղյան պատերազմի ընթացքում ու դրանից հետո փորձեցին արտահայտել անհամաձայնություն իրենց պետության քաղաքականության հետ, այդ թվում՝ ադրբեջանամետ կողմնակալության վերաբերյալ (ինչը հայամետություն չի նշանակում և ավելի շուտ արտահայտում էր չեզոքության պահպանման կոչեր), սակայն, ինչպես երևում է հետազոտության արդյունքներից, դա, բնականաբար, էական դեր չխաղաց: Իսրայելի և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերությունների անկայունությունը, Իսրայելում կարճ ժամանակահատվածում Հայաստանի դեսպանատան բացումն ու գրեթե անմիջապես հետո (ղարաբաղում ռազմական գործողությունների հետ կապված) դեսպանի հետ կանչելը[25] նույնպես չնպաստեց մեր պետությունների միջև թերընկալումների շտկմանը:

Այսպիսով՝ ՌԴ որպես ՀՀ ռազմավարական դաշնակցի, հանրային բարեկամական կերպարը Հայաստանում հատկապես վերջին տարիներին ենթարկվեց փորձությունների, և Էապես նվազեց՝ այնուամենայնիվ մնալով դրական: Փորձենք տեսնել, թե ինչպիսի առանձնահատկություններ ունեն Ռուսաստանի մասին ընկալումները հայաստանյան հասարակությունում՝ կախված հարցվածների սեռից[26] և տարիքից[27] (գծապատկեր 21).

25 https://www.azatutyun.am/a/30811438.html; https://www.azatutyun.am/a/30868810.html
26 Առկա է վիճակագրական թույլ կապ՝ X^2=6.603, p=037, Cramer's V=.066:
27 Առկա է վիճակագրական նշանակալի կապ՝ X^2=41.567, p<.001, Cramer's V=.165:



Գծապատկեր 21. Ռուսաստանը՝ բարեկա՞մ, թե՞ թշնամի (ըստ հարցվածների սեռի և տարիքի, %)

Կարելի է ասել, որ Հայաստանում տղամարդիկ ավելի շատ են հավանում, և ավելի շատ են քննադատում Ռուսաստանը, քան կանայք, մինչդեռ կանանց թիվն ավելի շատ է՝ Ռուսաստանը որպես չեզոք երկիր պատկերացնելու առումով (ոչ բարեկամ է, ոչ՝ թշնամի):

Շատ կարևոր է նկատել Ռուսաստանի հանդեպ բացասական վերաբերմունքի «երիտասարդացումը»՝ միտում, որ հատուկ է հետխորհրդային ժամանակահատվածում ընդհանուր լեզվամշակութային տարածությունից առանձնացած և հեռացող հասարակությունների համար: Հետազոտության արդյունքներից երևում է, որ ավագ սերունդը (56 տարեկան և բարձր) էապես ավելի շատ է հավանում Ռուսաստանն, ու ավելի քիչ քննադատում (այն օտարում), քան երիտասարդությունը (18-35 տարեկան), մինչդեռ միջին տարիքի բնակչությունը համապատասխանաբար այդ հարցում միջանկյալ դիրքորոշում ունի: Խորհրդային Միության մասին նոստալգիկ, դրական հիշողություններ ավագ և մասամբ՝ միջին սերնդի մոտ նաև պայմանավորում են բարեկամական վերաբերմունք արդի Ռուսաստանի, ռուսական մշակույթի հանդեպ, մինչդեռ երիտասարդությունը նման հիշողություններ և զգացմունքներ չունի, և առաջնորդվում է երիտասարդներին հատուկ քննադատական մտածողությամբ, սեփական փորձով, ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում շրջանառվող տեղեկատվությամբ, ընտանեկան և միջանձնային պատմություններով:

Հայաստանցիների՝ տարիքով պայմանավորված վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ ցույց է տալիս Ռուսաստանին բարեկամ համարելուց անցումը դեպի այն սեփական արժեհամակարգից, նախապատվություններից օտարելը,

ինչը հեռանկարում կարող է էապես դժվարացնել և խոչընդոտել հայ-ռուսական ռազմավարական համագործակցության ձևաչափի իրականացումը՝ այն զրկելով հասարակական աջակցությունից:

Հետաքրքիր է տեսնել, թե ինչպիսին է հայաստանցիների՝ սեռով և տարիքային[28] առանձնահատկություններով պայմանավորված վերաբերմունքը հակադիր բևեռը ներկայացնող ԱՄՆ-ի հանդեպ (գծապատկեր 22).



Գծապատկեր 22. ԱՄՆ՝ բարեկա՞մ, թե՞ թշնամի (ըստ հարցվածների սեռի և տարիքի, %)

Ինչպես արդեն նշվեց, վերջին տարիներին ԱՄՆ հանդեպ դրական վերաբերմունք ունեցող հայաստանցիների թիվը մշտապես աճել է՝ ՌԴ հանդեպ դրական վերաբերմունք ունեցողների քչացմանը զուգընթաց: Միևնույն ժամանակ, ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդներին ավելի ամերիկամետ դիրքորոշում վերագրելը սխալ է. եթե հայաստանյան երիտասարդությունը պակաս դրական է վերաբերում ՌԴ-ին, քան միջին և առավելևս ավագ սերունդը, ապա ԱՄՆ հանդեպ դրական վերաբերմունքը հարցվածների երիտասարդ տարիքով պայմանավորված չէ: Ընդհակառակը, ստացված տվյալներից կարելի է տեսնել, որ ԱՄՆ բարեկամ պետություն համարողների մեծ մասն ավագ, ապա՝ միջին սերնդի հայաստանցիներ են, իսկ երիտասարդների մեջ ավելի շատ են ԱՄՆ-ին թշնամի համարողները (այդ թիվն ընդհանուր առմամբ փոքր է):

Ստացված արդյունքներից պարզ է դառնում, որ հայաստանյան երիտասարդության կողմից Ռուսաստանի՝ որպես բարեկամ պետության հանդեպ վերաբերմունքի անկումը պայմանավորված է ոչ այնքան իրենց՝ ամերիկամետ

28 Առկա է վիճակագրական թույլ կապ՝ X^2=10.461, p=.033, Cramer's V=.083:

դառնալով, այլև այլ, այդ թվում՝ արդեն նշված գործոններով, որոնք ներառում են Խորհրդային Միության ընդհանուր լեզվամշակութային տարածքում չլինելը, քննադատական մտածողությունը, այլընտրանքային տեղեկատվական աղբյուրներից ՌԴ մասին տեղեկատվություն ստանալը: Խիստ կարևոր է նաև ՌԴ հանդեպ բնակչության տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների վերաբերմունքի կախվածությունն արդի քաղաքական իրադարձություններից և դրանցում ՌԴ դերակատարման ընկալումներից, որի մասին՝ վերլուծության հաջորդող մասում:

Եվ, ինչպես տեսնում ենք գծապատկերից, եթե ՌԴ հանդեպ տղամարդկանց վերաբերմունքն ավելի ծայրահեղ էր /ավելի շատ՝ միանշանակ բացասական և միանշանակ դրական/, քան կանանց, ապա ԱՄՆ հանդեպ երկու սեռի հայաստանցիների վերաբերմունքը գրեթե նույնական է:

Այժմ դիտարկենք նաև հայաստանցիների՝ կրթության մակարդակով պայմանավորված վերաբերմունքի առանձնահատկությունները Ռուսաստանի հանդեպ[29] (գծապատկեր 23).



Գծապատկեր 23. Ռուսաստանը՝ բարեկա՞մ, թե՞ թշնամի (ըստ հարցվածների կրթական մակարդակի, %)

Գծապատկերից կարելի է նկատել կարևոր օրինաչափություն. ՌԴ՝ որպես բարեկամական պետության հանդեպ վերաբերմունքի կրողների կրթա

29 Առկա է վիճակագրական նշանակալի կապ՝ X^2=55.730, p<0.001, Cramer's V=.192:

կան մակարդակն ավելի ցածր է, քան՝ բարձրագույն կրթություն ունեցողներինը, որքեր ավելի բացասաբար են տրամադրված Ռուսաստանի հանդեպ: Նույնը վերավերում է նաև ՌԴ հանդեպ ավելի չեզոք վերաբերմունքին. բարձրագույն կրթություն և գիտական կոչումներ ունեցող հայաստանցիների մոտ կեսը Ռուսաստանին համարում է ո՛չ բարեկամ, ո՛չ թշնամի, մինչդեռ այդ թիվը հատկապես փոքր է անավարտ միջնակարգ և այլ տիպի կրթություն ունեցողների դեպքում, ովքեր ՌԴ հանդեպ խիստ դրական են տրամադրված:

Սա կարելի է բացատրել մի քանի գործոններով, այդ թվում.

• Բարձրագույն կրթություն չունեցողներն ավելի շատ են հակված արտագնա աշխատանքի, այդ թվում՝ ՌԴ-ում, ինչը ստեղծում է կախվածություն Ռուսաստանից, այդ թվում՝ ռուսական աշխատաշուկայից:

• Հասարակության այս խումբը տպավորություն է կազմում Ռուսաստանի մասին հիմնականում առօրյա շփումից, կենցաղային և աշխատանքային հարաբերություններից ռուսաստանցիների հետ, կիսում է իրենց արժեքներն ու մոտեցումները, չի ուսումնասիրում հիմնախնդիրների խորքային պատճառներն ու հանգամանքները:

• Դատելով Հայաստանից դեպի Ռուսաստան արտագաղթի բնույթից՝ կարելի է տեսնել, որ արտագնա հայ աշխատողների մի մասը միտված է ՌԴ քաղաքացիություն ստանալու և հետագայում իրենց ընտանիքը Ռուսաստան տեղափոխելու, ինչը ստեղծում է այդ երկրի հանդեպ ավելի դրական վերաբերմունք, քան՝ Հայաստանի, ինչպես նաև այլ երկրների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բարձրագույն և հետբարձրագույն կրթական մակարդակ ունեցող հայաստանցիների՝ այլ խմբերից ավելի բացասական վերաբերմունքին Ռուսաստանի հանդեպ, ապա դա կարելի է բացատրել բարձրագույն կրթություն և գիտական կոչումներ ունեցողների մոտ քննադատական մտածողության, ռացիոնալ մոտեցման գերակայությամբ զգացմունքայնության հանդեպ:

Փաստերոն, եթե կրթություն չունեցողներն առաջնորդվում են սեփական անձի և ընտանիքի կենցաղային-տնտեսական շահերով, եկամտի, ներկայի և ապագայի առումով կախված են Ռուսաստանի աշխատաշուկայից և այնտեղ արտագաղթելու հեռանկարներից, ապա բարձրագույն կրթություն ունեցողների էական մասը Ռուսաստանի մասին դատում է ավելի լայն առումով՝ միջպետական հարաբերությունների, Հայաստանի շահերի, պատմական համատեքստի և ներկայիս քաղաքական գործընթացների վերլուծության շրջանակներում: Կրթական այս խմբի՝ ՌԴ հանդեպ բացասական վերաբերմունքը կարող էր ավելի դրական,

կամ առնվազն չեզոք լինել, եթե Ռուսաստանի կողմից հայաստանյան հասարակության հանդեպ «փափուկ ուժի» (գաղափարախոսություն, տեղեկատվական-արժեքային ներազդում, ներգրավում գիտակրթական, երիտասարդական և այլ ծրագրերում) կիրառումը լիներ ավելի արդյունավետ, ակտիվ, և հասցեական: Չի բացառվում, որ ԱՄՆ և ՆԱՏՕ տեղեկատվական քաղաքականության շնորհիվ է, որ իրենց վարկանիշը հայաստանցիների ընկալումներում տարեց տարի աճում էր՝ չնայած զգալի հայամետ մոտեցումների և ՀՀ համար կոնկրետ հեռանկարների բացակայությանը:

Այժմ դիտարկենք Եվրոպական կառույցների և եվրաինտեգրման հեռանկարների մասին հայաստանցիների հանրային ընկալումները՝ ՌԴ և ԱՄՆ բևեռների համատեքստում: Ինչպես տեսանք ստացված արդյունքներից, ԵՄ կերպարը չի արտացոլվում իր առանձին պետությունների հանդեպ վերաբերմունքով. եթե հայաստանցիների ընկալումներում Ֆրանսիան բարեկամ պետություն է, ապա Գերմանիան՝ չեզոք: Այդ իսկ պատճառով ԵՄ հետ համագործակցության հեռանկարները դարձյալ չափվել են՝ ՌԴ մասնակցությամբ Եվրասիական Տնտեսական Միության հեռանկարայնության հետ համեմատության մեջ (գծապատկեր 24).



Գծապատկեր 24. Տնտեսական ո՞ր միավորմանն անդամակցությունն է ավելի հեռանկարային ՀՀ-ի համար, %

Համեմատելով ստացված արդյունքները նաև անվտանգային-պաշտպանական կառույցներին ՀՀ անդամակցման և դրանց հետ համագործակցության վերաբերյալ հայաստանցիների պակերացումների հետ, կարելի է դուրս բերել հետևյալ օրինաչափությունները.

• Եթե ՆԱՏՕ-ի՝ որպես արևմտյան պետությունները միավորող ռազմաքաղաքական կառույցի հետ, համագործակցելու հեռանկարայնությունը տեսնում է

հայաստանցիների 34,1%-ը, ապա ԵՄ հետ Հայաստանի համագործակցությունը ցանկալի է ավելի մեծ թվով հայաստանցիների՝ 46,1%-ի համար, ինչը նշանակում է, որ Արևմուտքի հետ համագործակցության քաղաքատնտեսական ձևաչափն ավելի նախընտրելի է, քան ռազմաքաղաքականը: Առհասարակ, արտաքին կառույցների հետ համագործակցության տնտեսական ձևաչափն ավելի նախընտրելի է ռազմականին, ինչի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ որևէ ռազմաքաղաքական կառույցին անդամակցելուն դեմ են ավելի շատ հայաստանցիներ (26,2%), քան՝ քաղաքատնտեսական կառույցներին (12,5%):

• Հայաստանցիների ընկալումներում՝ ՌԴ կողմից առաջնորդվող և՛ ռազմաքաղաքական (ՀԱՊԿ), և տնտեսական (ԵԱՏՄ) կառույցները մոտավորապես նույն հեռանկարայնությունն ունեն (29,1% և 28,7%), և զիջում եմ համապատասխան արևմտյան կառույցներին ՀՀ համար հեռանկարների, ձեռնտու լինելու առումով:

• Հայաստանցիների մոտ 10%-ը քաջատեղյակ չէ ո՛չ ռազմաքաղաքական (ՀԱՊԿ, ՆԱՏՕ), ո՛չ քաղաքատնտեսական միությունների (ԵԱՏՄ, ԵՄ) մասին, որոնց Հայաստանը կա՛մ անդամակցում է, կա՛մ երկարատև համագործակցում: Սա կարող է նշանակել, որ բնակչության այդ հատվածը կա՛մ իսկապես չգիտի այդ կառույցների բնույթի, ՀՀ կողմից դրանց հետ համագործակցության ծրագրերի, արդյունքների մասին, կամ այդ արդյունքներն այնքան աննշան է համարում, որ նախընտրում է անգամ չճանաչել և չընկալել, ինչը քաղաքական անտարբերության (ապատիայի) դրսևորումներից մեկը կարող է լինել:

Ամփոփելով ՀՀ համար բարեկամ և թշնամի պետությունների մասին հայաստանցիների պատկերացումների դուրսբերումը՝ կարևորել ենք 2018թ. “Թավշյա հեղափոխությունից” հետո հայ-ռուսական փոխհարաբերությունների գնահատումը, որի շուրջ հանրային գիտակցության մեջ և դրա վրա ներազդող հանրային տեղեկատվական աղբյուրներում առկա են տարաբնույթ մոտեցումներ, այդ թվում՝ ՀՀ հետհեղափոխական իշխանությունների կողմից այդ փոխհարաբերությունները միտումնավոր վատթարացնելու մասին[30]: Այս հարցի հանրային ընկալումները կներկայացնենք՝ ըստ հարցվածների տարիքի, կրթության մակարդակի, բնակավայրի, ինչպես նաև առանձին՝ հետհեղափոխական իշխանությունների հանդեպ վստահության (գծապատկեր 25).

30 Տե՛ս, օրինակ. Савельев, А. (2021) Что готовит Пашинян для России? Лазаревский клуб, URL: https://lazarevsky.club/analitika/chto-gotovit-pashinyan-dlya-rossii/



Գծապատկեր 25. Ինչպե՞ս են փոխվել հայ-ռուսական փոխհարաբերությունները ՀՀ-ում «Թավշյա հեղափոխությունից» հետո, %

Կարող ենք տեսնել, որ հարցվածների կեսի կարծիքով՝ ՀՀ-ՌԴ փոխհարաբերությունները 2018թ. «Թավշյա հեղափոխությունից» հետո չեն փոխվել: Ինչ վերաբերում է նկատելի փոփոխություններին, ապա դրանք ավելի շատ վերաբերում են հայ-ռուսական փոխհարաբերությունների վատթարացմանը, քան՝ ամրապնդմանը:

Միևնույն ժամանակ, վերոնշյալ իրավիճակը կարող է հայաստանցիներից տարբեր գնահատականների արժանանալ, ուստի անհրաժեշտ է պարզել, թե, մասնավորապես, ինչպես են գնահատում հայ-ռուսական փոխհարաբերություններն այն բնակիչները, ովքեր 2018թ. «Թավշյա հեղափոխությունը» դրական կամ բացասական երևույթ են համարում, և տարբեր կերպ են գնահատում նաև հետհեղափոխական իշխանությունների գործելաոճը:

«Թավշյա հեղափոխությունը» դրական երևույթ համարելը միանշանակ չէ, որ ենթադրում է նաև հետհեղափոխական փուլում հայ-ռուսական հարաբերությունների ոլորտում ՀՀ իշխանությունների գործելակերպի դրական գնահատում: Դիտարկենք հնարավոր տարբերությունները «Թավշյա հեղափոխության» երևույթի, և ՀՀ հետհեղափոխական իշխանությունների գործելակերպի գնահատման մեջ (գծապատկեր 26).



Գծապատկեր 26. «Թավշյա հեղափոխության» և դրա արդյունքում ձևավորված իշխանությունների գործունեության գնահատում, %

Կարելի է տեսնել հետհեղափոխական փուլում հանրային կարծիքի փոխակերպման հետևյալ միտումները.

• «Թավշյա հեղափոխությունը» միանշանակ դրական երևույթ համարող բնակիչների որոշ մասը հետհեղափոխական իշխանությունների գործելակերպից հիասթափվել է,

• «Թավշյա հեղափոխությունը» միանշանակ բացասական երևույթ համարողներից է՛լ ավելի շատ բնակիչ բացասաբար է վերաբերում հետհեղափոխական իշխանություններին,

• հարցվածների յուրաքանչյուր երրորդը և՛ «Թավշյա հեղափոխության» մեջ, և՛ հետհեղափոխական իշխանությունների գործելակերպում տեսնում է ինչպես դրական, այնպես էլ բացասական տարրեր:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի միտումներ են տեսնում հայ-ռուսական հարաբերություններում «Թավշյա հեղափոխության» կողմակիցներն ու ընդդիմախոսները[31] (գծապատկեր 27).

31 Առկա է վիճակագրական նշանակալի կապ՝ $X^2=105.983$, $p<0.001$, Cramer's V=.271:



Գծապատկեր 27. ՀՀ-ում «Թավշյա հեղափոխության» գնահատումը, և հայ-ռուսական փոխհարաբերությունների դինամիկան, %

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ.

• որքան ավելի բացասական-քննադատական է հանրության կարծիքը «Թավշյա հեղափոխության» մասին, այնքան ավելի բացասական են համարում «Թավշյա հեղափոխության» ազդեցությունը նաև հայ-ռուսական հարաբերությունների վրա: Այսպես, «Թավշյա հեղափոխությունը» բացասական երևույթ համարող հայաստանցիների (հարցվածների 24%) կեսը հետհեղափոխական ժամանակահատվածում հայ-ռուսական հարաբերությունների վատթարացում է տեսնում:

• Որքան ավելի դրական է կարծիքը «Թավշյա հեղափոխության» հանդեպ, այնքան ավելի դրական է նաև հայ-ռուսական փոխհարաբերությունների հետհեղափոխական զարգացումների գնահատումը, և նույնքան պակաս՝ վատթարացման մասին հանրային կարծիքը: «Թավշյա հեղափոխությունը» միանշանակ դրական երևույթ համարող բնակիչների (40%) ամենամեծ՝ 23%-ը գտնում է, որ հետհեղափոխական փուլում հայ-ռուսական հարաբերություններն ամրապնդվել են:

• Ի տարբերություն, «Թավշյա հեղափոխությունը» բացասաբար գնահատողների մեծ մասը հետհեղափոխական փուլում հայ-ռուսական փոխհարաբերությունների վատթարացում է տեսնում:

• Կարևոր է նկատել նաև, որ «Թավշյա հեղափոխությանը» միանշանակ լավ, կամ գոնե մասամբ լավ վերաբերող բնակիչների մեծ մասը ներկայիս հայ-ռուսական փոխհարաբերություններն անփոփոխ են համարում, այսինքն՝ նույնը, ինչ իրականացվել է մինչև «հեղափոխությունը»:

Ինչպես տեսանք՝ «Թավշյա հեղափոխության» հանդեպ դրական վերաբերմունքը ներկայիս փուլում միշտ չէ որ դրական վերաբերմունք է ենթադրում նաև հետհեղափոխական իշխանությունների հանդեպ, իսկ "հեղափոխությանը" բացասաբար վերաբերողներից է՛լ ավելի շատ են ՀՀ հետհեղափոխական իշխանություններին քննադատողները: Այդ իսկ պատճառով կարևոր է նաև քննարկել հայ-ռուսական հարաբերությունների ընկալման առանձնահատկությունները՝ ըստ հետհեղափոխական իշխանությունների հանդեպ վերաբերմունքի[32] (գծապատկեր 28).



Գծապատկեր 28. ՀՀ-ում «Թավշյա հեղափոխության» արդյունքում ձևավորված իշխանության գնահատումը, և հայ-ռուսական փոհրահաբերությունների դինամիկան, %

Կարելի է նկատել, որ դարձյալ հայ-ռուսական հարաբերությունների վատթարացումն առաջին հերթին տեսնում են հետհեղափոխական իշխանությունների գործունեությունը բացասաբար գնահատող քաղաքացիները , և վատթարացման մասին պատկերացումները նվազում են՝ հետհեղափոխական իշխանությունների հանդեպ դրական վերաբերմունքի աճի հետ մեկտեղ: Հայ-ռուսական հարաբերություններում կայուն, անփոփոխ վիճակի մասին կարծիքը համեմատաբար պակաս է տարածված հետհեղափոխական իշխանություններին առավել բացասաբար վերաբերողների մոտ: Հետաքրքիր է նկատել, որ հետհեղափոխական իշխանություններին սատարողների մեծ մասը գտնում է, որ իրենց

32 Առկա է վիճակագրական նշանակալի կապ՝ $X^2=143.436$, $p<0.001$, Cramer's V=.314:

կողմից աջակցություն վայելող ղեկավարները հիմնականում շարունակում են ՌԴ հետ ՀՀ նախորդ իշխանությունների հարաբերությունները, և դրանք անգամ ամրապնդում են, այսինքն՝ ՀՀ ներկայիս իշխանություններին չեն ընկալում որպես հակառուսական :

Ընդհանուր առմամբ, ստացված արդյունքների համաձայն, հայաստանցիների, այդ թվում՝ «Թավշյա հեղափոխությանն» ու ՀՀ հետհեղափոխական իշխանություններին սատարողների էական մասը ոչ միայն չի տեսնում հայ-ռուսական հարաբերությունների վատթարացում, այլև հիմնականում դրանք անփոփոխ, և անգամ ամրապնդվող է համարում: Միևնույն ժամանակ, և՛ «Թավշյա հեղափոխությանը» լիովին կամ մասամբ սատարողների, և այն քննադատողների շարքերում առկա է հայ-ռուսական հարաբերությունների վատթարացում տեսնելու միտում, որն առավել բնութագրական է հենց «հեղափոխությունն» ու Է՛լ ավելի շատ՝ հետհեղափոխական քաղաքական իշխանություններին բացասաբար գնահատողների մոտ:

ՄԱՍ 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ՀՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Ինչպես տեսանք վերոգրյալից՝ վերջին տարիներին տեղի ունեցավ ՌԴ՝ որպես ՀՀ ռազմավարական դաշնակցի հանդեպ հայաստանցիների դրական-բարեկամական վերաբերմունքի նվազում, և եթե ներկայումս ՌԴ-ն շարունակում է առավելապես ընկալվել որպես բարեկամական պետություն, ապա այն որպես թշնամական պետություն ընկալողների քանակի աճի հետ մեկտեղ էապես աճել է այն հայաստանցիների թիվը, ովքեր բարեկամ են համարում ԱՄՆ-ն և Արևմուտքի հետ Հայաստանի փոխհարաբերություններն ընկալում որպես ավելի նախընտրելի: Բացի այդ, հանրային ընկալումներում Ռուսաստանը բարեկամական երկրների շարքում այլևս բացառիկ չէ, և հայաստանցիների դրական վերաբերմունքի առումով գրեթե հավասար է Ֆրանսիային և Իրանին:

Հասկանալի է, որ գործառույթների առումով Ռուսաստանը շարունակում է ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության, հատկապես՝ անվտանգության ոլորտում ունենալ բացառիկ դերակատարում, որից էապես ու համակարգային առումով հեռու են և՛ Ֆրանսիան (ինչպես նաև ԵՄ-ը առհասարակ), և՛ Իրանի Իսլամական Հանրապետությունը, և՛ ԱՄՆ-ն: Այս իմաստով հայաստանցիների պատկերացումներում այդ երեք պետությունների՝ որպես ՀՀ բարեկամների գրեթե հավասար ընկալումն ավելի շատ սիմվոլիկ է: Այն պայմանավորված է ոչ այնքան այդ պետությունների իրական ազդեցությամբ, որքան այդ ազդեցության հայամետության մասին տեղեկատվական գործընթացներով, քարոզչությամբ, հանրային քննարկումներով, նաև՝ ՌԴ հանդեպ նախկինում ձևավորված սպասումների և իրականության միջև տարբերությամբ, որոշակի հիասթափությամբ, ինչը դրդում է ավելի լավ վերաբերմունքի արժանացնել այլ բարեկամներին:

Միևնույն ժամանակ, հետազոտության ընթացքում փորձեցինք պարզել, թե ինչ են ակնկալում հայաստանցիները՝ ՌԴ, ԵՄ, Իրանի, ԱՄՆ-ի և տարածաշրջանային ազդեցության առումով կարևորվող այլ քաղաքական դերակատարների հետ հարաբերություններից (գծապատկեր 29).



Գծապատկեր 29. Ո՞ր նշյալ երկրի/ների հետ Հայաստանի ավելի սերտ համագործակցությունը առավել կնպաստի..., %

Գծապատկերից կարելի է տեսնել, որ.

• Հայաստանցիների ընկալումներում՝ ինչպես ՀՀ անվտանգության ապահովման, այնպես էլ ՀՀ տնտեսական զարգացման հարցերում ՌԴ-ն ունի առաջատար դիրքեր. այդպես է կարծում հարցվածների՝ համապատասխանաբար 53.5% և 52%-ը): ԵՄ պետություններն անվտանգության ոլորտում Ռուսաստանին էապես են զիջում (34%)՝ գրեթե չզիջելով ՀՀ տնտեսական զարգացման մեջ իրենց դերակատարման առումով (49%):

• ՀՀ ժողովրդավարացման, ՀՀ-ում կյանքի որակի բարձրացման, մարդու իրավունքների պաշտպանության, ավելի լավ կրթության առումով ԵՄ-ը հայաս-

տանցիների պատկերացումներում զբաղեցնում է առաջատար դիրքեր:

• ԱՄՆ դերակատարումը ՀՀ համար կարևոր հիմնահարցերի ոլորտում բոլոր ցուցանիշներով առաջին եռյակում է, իսկ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության, կրթության զարգացման, ՀՀ-ում կյանքի որակի բարձրացմանը նպաստելու առումով, հայաստանցիների պատկերացումներում, զիջում է Եվրամիությանը, սակայն առաջ է Ռուսաստանից:

• ՀՀ տնտեսական կյանքում զգալի է Չինաստանի, Իրանի, Հնդկաստանի դերակատարումը: Մյուս ոլորտներում այլ պետությունների շարքում առաջատար է համարվում Չինաստանը:

• Տարածաշրջանում Թուրքիայի կարևոր դերակատարման առումով առաջարկվել է գնահատել նաև Թուրքիայի հնարավոր ազդեցությունը ՀՀ զարգաման առումով, սակայն, ինչպես տեսնում ենք ստացված արդյունքներից, հայաստանցիների մեծամասնությունն այդ պետության հնարավոր դերակատարումը անցանկալի է համարում, և միայն 3%-ն է նշում Թուրքիայի ազդեցության մասին Հայաստանի տնտեսության վրա: Չնայած նրան, որ ստացված արդյունքների համաձայն ԵՄ-ը հայաստանցիների պատկերացումներում ունի առաջատար դիրքեր Հայաստանի ընդհանուր զարգացման առումով և, միևնույն ժամանակ, Հայաստանի անվտանգությունն ապահովում է Ռուսաստանի Դաշնությունը, այնուամենայնիվ տեսնենք, թե որոնք են, ըստ հարցվածների, Հայաստանում ԵՄ ազդեցությունը սահմանափակող գործոնները (գծապատկեր 30)[33].

33 Հնարավոր էր նշել միայն մեկ տարբերակ:



Գծապատկեր 30. Եվրոպական Միության հետ Հայաստանի ինտեգրմանը խոչընդոտող գործոնները, %

Կարող ենք տեսնել, որ հայաստանցիների ընկալումներում ԵՄ հետ Հայաստանի համագործակցությանը խոչընդոտող ամենաէական գործոնն է ՌԴ հետ ՀՀ սերտ հարաբերությունները. փաստորեն, հարցվածների 38%-ի կարծիքով, ՀՀ հարաբերությունների զարգացումը միաժամանակ ՌԴ և ԵՄ հետ և, համապատասխանաբար, կոմպլեմենտար քաղաքականությունը խնդրահարույց է: Միևնույն ժամանակ, այդպես չի կարծում հարցվածների մեծամասնությունը: Մյուս գործոններից նկատելի է ինքնաքննադատությունը. ԵՄ հետ Հայաստանի համագործակցությունը խոչընդոտող զգալի գործոններից է ՀՀ-ում ժողովրդավարության անբավարար մակարդակն ու տնտեսական հետամնացությունը: Մյուս գործոնների ազդեցությունը, այդ թվում՝ ՀՀ անդամակցությունը ԵԱՏՄ-ին, աշխարհագրական դիրքը, և այլն, հայաստանցիների կարծիքով զգալի չէ:

Այժմ դիտարկենք այն մտավախությունները, որոնք ունի հայաստանյան հա-

սարակությունը՝ կապված տարածաշրջանային պետությունների բացասական ազդեցության հետ Հայաստանի անվտանգության և զարգացման վրա (գծապատկեր 31)[34].



Գծապատկեր 31. ՀՀ համար նպաստավոր համագործակցության երկրները, %

Կարելի է տեսնել, որ.

• Թուրքիայի հետ Հայաստանի հնարավոր համագործակցությունը հասարակության պատկերացումներում լի է սպառնալիքներով և ցանկալի չէ:

• ԵՄ հետ հարաբերությունների զարգացման հետ կապված գրեթե միակ շոշափելի վախն ազգային արժեքների կորուստն է: Այս կարծիքը կարող է ար-

34 Հնարավոր էր ընտրել մինչև երեք տարբերակ:

տահայտել հասարակության մեջ առկա հակագլոբալիստական մոտեցումներ, ինչպես նաև կարծրատիպային պատկերացումներ «անկայուն եվրոպական ընտանիքների», «միասեռ եվրոպական ընտանիքների», «Եվրոպայում թմրադեղերի ազատ շրջանառության» և նման երևույթների մասին, դրանով իսկ՝ մտավախություններ հայկական կայուն ընտանիքին սպառնացող ռիսկերի վերաբերյալ: Նման մտավախություններ է արտահայտել հարցվածների 17%-ը:

• Ռուսաստանի աճող ազդեցության հնարավոր վտանգներից է ՀՀ ինքնիշխանության կորուստը, ինչպես նաև ՀՀ տնտեսության ենթարկումը ռուսաստանյան շահերին. վերջինս, հավանաբար, կապված է «Գույք պարտքի դիմաց» ծրագրով հայաստանյան մի շարք ձեռնարկությունների փոխանցման հետ ՌԴ-ին, Հայաստանում կապի, էներգետիկայի գրեթե ամբողջությամբ վերահսկմանը ՌԴ-ի կողմից: Հետաքրքիր է նկատել, որ Եվրոպական երկրներից հետո Ռուսաստանի հետ հարաբերությունների սերտացումը հասարակության որոշակի հատվածի կողմից (14%) նույնպես դիտվում է որպես ռիսկերի աղբյուր հայկական ավանդական արժեքների կորստի առումով: ԱՄՆ դերակատարումն այս և մյուս տեսակի ռիսկերի առումով հանրային ընկալումներում պակաս նշանակալի է:

• Հարևան Իրանի հետ հարաբերությունների զարգացումը բոլոր նշված առումներով պակաս ռիսկային չէ, և առավել նկատելի է ազգային արժեքներին սպառնացող վտանգների հարցում (նշել է հարցվածների 7%-ը): Նույնքան տոկոս նշել է նաև Վրաստանը՝ որպես ազգային արժեքների հանդեպ սպառնալիքների, հավանաբար, ոչ այնքան աղբյուր, որքան՝ միջանցք Եվրոպայից: Հարցվածների 6% Վրաստանը դիտուրկում են նաև որպես Հայաստանի տնտեսությունը կախվածության մեջ դնող երկիր:

• Չինաստանի, և առավելևս Հնդկաստանի հետ հարաբերությունների զարգացման հետ կապված հայաստանցիները գրեթե որևէ սպառնալիքներ վերոնշյալ հարցերում չեն տեսնում:

• Կարևոր է նկատել այլ պետությունների հետ հարաբերությունների հնարավոր զարգացման հետ կապված հայաստանցիների մտավախությունները՝ որպես տարաբնույթ սպառնալիքների աղբյուրների: Հասարակության անդամների 23%-ի կարծիքով՝ մի շարք այլ պետությունների հետ հարաբերությունները հատկապես կվտանգեն հայ ազգային արժեքներն ու ՀՀ ինքնիշխանությունը, ապա՝ բնակչության աճը (21%) և տնտեսական ինքնուրույնությունը (16%):

ՄԱՍ 5. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Ունենալով պատկերացումն այն մասին, թե հայաստանյան հասարակությունն արդի պայմաններում ինչպես է վերաբերում աշխարհում և, մասնավորապես, Հարավային Կովկասի տարածաշրջանում կարևոր դերակատարում ունեցող պետություններին և միջպետական միավորումներին, հնարավոր է անցում կատարել դեպի հիմնական դաշնակցի՝ Ռուսաստանի Դաշնության հետ փոխհարաբերությունների զարգացման առաջնահերթությունները: Ինչպես տեսանք սույն հետազոտության նախորդ մասում՝ ինչպես այլ բարեկամ և թշնամական պետությունների, այնպես էլ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի դեպքում հայաստանցիներն ունեն որոշակի վախեր և մտավախություններ, որոնք առնչվում են Հայաստանում Ռուսաստանի ներկայության և դերակատարման ձևաչափերի, սահմանների, ռիսկերի հետ:

Այսպես, 2020թ. նոյեմբերի 16-ին, ՀՀ սահմանների և տարածքային ամբողջականության խախտմամբ Ադրբեջանի ռազմական գործողությունների նույն օրը տեղի ունեցած ՀՀ Ազգային Ժողովի նիստում հակառուսական ելույթներ ունեցան որոշ իշխանական պատգամավորներ, ինչը վկայում է, որ արտաքին քաղաքական կողմնորոշման փոփոխության թեման զգուշորեն քննարկվում է նաև խորհրդարանական մեծամասնություն ստացած քաղաքական ուժի ներսում, որի բաղկացուցիչն են նաև արևմտամետ որոշակի շրջանակներ: Այդ ելույթները որոշակի արձագանք են գտել հայ քաղաքացիների մոտ: «Մենք օգնություն ենք խնդրում, իսկ մեզ ասում են գրավոր դիմեք, մի թե օգնելը գրություններով է լինում» **նախադասությամբ հնչել է** շարքային հայ քաղաքացիների ընդհանրացված տեսակետը, որը ձևավորվել է ՀՀ պետական սահմանի նկատմամբ ադրբեջանական ոտնձգությունների ժամանակ ՌԴ կողմից դաշնակցային պարտավորությունների կատարման վերաբերյալ: Մարդիկ կարծում են, որ բարեկամները միմյանց օգնելու համար չպետք է սպասեն պաշտոնական գրությունների: Շարքային հայ քաղաքացու համար անհասկանալի է ոչ միայն Ռուսաստանի իշխանությունների նմանատիպ վերաբերմունքը, այլ նաև ռուսաստանյան հանրության հայանպաստ արձագանքի բացակայությունը: Հանրային կարծիքում առկա և հնչեցվող հարցերից են, թե ինչու՞ է Ռուսաստանը երկու հակամարտող

կողմերի միջև հավասարության նշան դնում, երբ Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցն է, իսկ Ադրբեջանը՝ ոչ: Շրջանառվում է այն կարծիքը, թե Ադրբեջանը դժվար կհարձակվեր ՀՀ պետական սահմանի վրա, եթե վստահ չլիներ, որ այդ սահմանը չի դիտարկվի որպես ՀԱՊԿ-ի ընդհանուր սահման և դաշնակցային պարտավորությունների թիրախ: Այս և նման հարցադրումներ մշտապես ուղեկցում են ՌԴ՝ որպես ՀՀ ռազմավարական դաշնակցի դերակատարման վերաբերյալ հանրային քննարկումները:

Միևնույն ժամանակ, եթե հայաստանցիները ՀՀ իրավական, կրթական, ժողովրդավարական բարեփոխումները ցանկանում են վստահել ԵՄ պետություններին, ապա ՀՀ անվտանգությունն՝ առաջին հերթին Ռուսաստանին:

Տեսնենք, թե առհասարակ ինչ է ուզում հայաստանյան հասարակությունը՝ կապված հայ-ռուսական անվտանգային փոխհարաբերությունների ապագայի հետ: Պետք է նշել, որ 2020թ. աշնանը տեղի ունեցած մարտական գործողությունների և դրանց հետևանքների համատեքստում հայաստանյան հասարակության ցանկությունը ՀՀ անվտանգության հարցերում ՌԴ դերակատարման վերաբերյալ այլևս չի կարող դիտվել որպես որոշիչ գործոն, քանի որ օբյեկտիվորեն անխուսափելի է և, մասնավորապես, ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս անդամների հետ համեմատ բացառիկ: Միևնույն ժամանակ, հայաստանյան հասարակության կողմից հակառուսական տրամադրությունների խորացումն ու ծավալումը կարող է դժվարացնել հայ-ռուսական համագործակցության արդյունավետությունը, այդ թվում՝ ՀՀ անվտանգային շահերի ապահովման հարցում: Փաստորեն, այս սկզբունքային հարցը խիստ կարևոր է հատկապես երկու առումներով.

• ներկայում և հետագայում միջպետական հարաբերությունների իրականացման համար անհրաժեշտ հասարակական աջակցություն ակնկալելու և սոցիալական հենք ունենալու առումով,

• ինչպես հայաստանյան, այնպես էլ ռուսաստանյան հասարակության տարաբնույթ ներկայացուցիչների (պաշտոնյաներ, փորձագետներ, լրագրողներ) կողմից այդ հարցի անտեղի և վտանգավոր շահարկումներին փաստացի տվյալներ և իրական վիճակի մասին ստույգ տեղեկատվություն հակադրելու անհրաժեշտության առումով:

Դիտարկենք ստացված տվյալները (գծապատկեր 32).[35]

35 Հնարավոր էր ընտրել միայն մեկ տարբերակ:



Գծապատկեր 32. ՌԴ հետ ՀՀ հարաբերությունների հեռանկարները, %

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ.

1. միտված լինելով ՌԴ հետ ռազմավարական-դաշնակցային փոխհարաբերությունների զարգացմանը, առաջին հերթին՝ անվտանգության ոլորտում, հայաստանյան հասարակությունը շարունակում է մտածել փոխլրացնող /կոմպլեմենտար/ արտաքին քաղաքականության ձևաչափով: Փաստորեն, 2018թ. գարնանը Հայաստանում տեղի ունեցած «Թավշյա հեղափոխությունից» հետո էլ հայաստանցիների մեծ մասը շարունակում է տարածաշրջանում ՀՀ տեղն ու դերը պատկերացնել Հայաստանի նախորդ քաղաքական ուժերի և իրենց կողմից իրականացվող կոմպլեմենտարիզմի գաղափարախոսության սահմաններում՝ անգամ հաշվի չառնելով այն փաստը, որ 2020թ. աշնանը Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմի և հետպատերազմյան իրողությունների պայմաններում ՀՀ կոմպլեմենտար քաղաքականությունը արդյունք չտվեց: Զբաղված լինելով նախագահական ընտրություններով՝ ԱՄՆ վարչակարգը ՀՀ դիրքորոշումն ու անվտանգային նկատառումները որևէ զգալի ուշադրության չարժանացրեց, իսկ ԵՄ դիրքորոշումը /բացառությամբ Ֆրանսիայի/ հնչել է Հայաստանին և Ադրբեջանին ուղղված միևնույն կոչերով: Ստացված արդյունքներից կարելի է տեսնել, որ հայաստանյան հասարակությունը ղարաբաղյան պատերազմի հետևանքով ստեղծված սկզբունքային նոր իրավիճակն ու ՀՀ անվտանգության ապահովման ներկայիս փաստացի ձևաչափը՝ ՌԴ գրեթե միակ դերակատարմամբ, դեռևս չի իմաստավորել, իսկ ՀՀ իշխանություններն այդ իրողության պայմաններում չեն տվել անհրաժեշտ գործելակերպի հայեցակարգային ձևակերպում: Կոմպլեմենտար քաղաքականության հնարավորությունների մասին մեծամասնության անփոփոխ լավատեսությունն ու նոր իրողությունների համարժեք վերիմաստավորման /պրագմատիզմի/ ցածր մակարդակը, այլ գործոնների հետ մեկտեղ, հավանաբար պայմանավորված են հայ ազգային աշխարհայացքով և քաղաքակրթական առաքելության մասին սերնդե սերունդ փոխանցվող պատկերացմամբ, որի համաձայն Հայաստանը "Արևմուտքի և Արևելքի խաչմերուկում է" ոչ միայն աշխարհագրորեն, այլ նաև որպես կապող օղակ: Այս աշխարհայացքային բանաձևն իր ակտիվ, գործուն վիճակում իրոք կարող է ապահովել գրեթե հավասար, փոխլրացնող հարաբերություններ արևմտյան և արևելյան երկրների հետ, սակայն ներկայիս իրողությունների պայմաններում ՀՀ-ը այլևս չունի այդ մոտեցման իրականացման համար անհրաժեշտ ռազմավարություն և հնարավորություններ:

2. Վերոնշյան կոմպլեմենտար տեսանկյունը առավելապես հատուկ է Հայաստանի իգական սեռի բնակիչներին[36], երիտասարդությանը[37], միջին մասնագի-

36 Առկա է վիճակագրական կապ՝ $X^2=9.878$, $p=0.007$, Cramer's V=.082:
37 Առկա է վիճակագրական նշանակալի կապ՝ $X^2=44.718$, $p<0.001$, Cramer's V=.174:

տական և բարձրագույն կրթություն ունեցողներին[38]: Գյուղաբնակների և քաղաքաբնակների հայացքներում այդ հարցի վերաբերյալ գրեթե տարբերություն չկա:

3. Համապատասխանաբար, ՌԴ հետ ռազմավարական համագործակցության զարգացումը ստեղծված իրողությունների պայմաններում ավելի հատուկ է տղամարդկանց, ավագ սերնդի ներկայացուցիչներին, կրթական ավելի ցածր շեմ ունեցողներին:

4. ՌԴ հետ հարաբերությունների դադարեցման տեսակետը Հայաստանում գրեթե ընդունելի չէ. հետաքրքիր է նկատել, որ այն մյուս բոլոր խմբերի համեմատ առավել տիպիկ է գիտական կոչում ունեցողներին /7%/, ինչը նշանակում է, որ տվյալ անձանց կողմից նաև հրապարակային ելույթներում այս տեսանկյան տարածումը կարող է նաև ազդեցություն ունենալ հասարակության այլ անդամների վրա: Միևնույն ժամանակ, այս խմբում հակառուսական տրամադրությունների զգալի առկայությունը կրկին անգամ հաստատում է տարիներ շարունակ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտում արևմտյան ակտիվ ազդեցության արդյունավետությունը և ՌԴ կողմից տվյալ ուղղությամբ «փափուկ ուժի» կիրառման ցածր մակարդակը:

Այժմ տեսնենք, թե հատկապես որ հարցերում, ինչ չափով, որ սահմաններում և որ նպատակներով է հայաստանյան հասարակությունը տեսնում ՌԴ հետ ՀՀ ռազմավարական համագործակցության ցանկալիությունը (գծապատկեր 33) [39].

38 Առկա է վիճակագրական թույլ կապ՝ X^2=19.667, p=0.033, Cramer's V=.115:

39 Առկա են վիճակագրական նշանակալի կապեր.

Կախված բնակավայրից՝

• Հայաստանը Ռուսաստանի հետ պետք է զարգացնի լավ հարաբերություններ - X^2=34.36, p=0.64, Cramer's V=.048

• Հայաստանը Ռուսաստանին պետք է թույլատրի սեփական զորքերը և բազաները տեղադրել մեր երկրի տարածքում - X^2=7.899, p=0.005, Cramer's V=.073

• Հայաստանը Ռուսաստանին պետք է թույլատրի հայ-ադրբեջանական սահմանային ողջ վերահսկողությունը - X^2=10.832, p=0.001, Cramer's V=.085

• Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծումը պետք է վստահել միայն Ռուսաստանին - X^2=17.238, p<0.001, Cramer's V=.107

• Հայաստանում պետք է լինեն Ռուսաստանի հետ հարաբերությունների ամրապնդումն ապահովող իշխանություններ - X^2=8.618, p=0.003, Cramer's V=0.076

•Կախված տարիքից՝

• Հայաստանը Ռուսաստանի հետ պետք է զարգացնի լավ հարաբերություններ - X^2=32.083, p<0.001, Cramer's V=.146

• Հայաստանը Ռուսաստանին պետք է թույլատրի սեփական զորքերը և բազաները տեղ ադրել մեր երկրի տարածքում - X^2=33.509, p<0.001, Cramer's V=.151

• Հայաստանը Ռուսաստանին պետք է թույլատրի հայ-ադրբեջանական սահմանային ողջ վերահսկողությունը - X^2=24.283, p<0.001, Cramer's V=.121

• Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծումը պետք է վստահել միայն Ռուսաստանին - X^2=40.230, p<0.001, Cramer's V=.164

• Հայաստանում պետք է լինեն Ռուսաստանի հետ հարաբերությունների ամրապնդումն ապահովող իշխանություններ - X^2=11.645, p=0.003, Cramer's V=.089



Գծապատկեր 33. Ռուսաստանի ցանկալի դերակատարումը ՀՀ անվտանգային հարցերում (ըստ հարցվածների տարիքի և բնակավայրի, %)

Ստացված արդյունքներից կարելի է տեսնել, որ.

• ՌԴ հետ ՀՀ լավ հարաբերությունների զարգացումը հարցվածների մեծա-

մասնության ցանկությունն է և, միևնույն ժամանակ, ՀՀ-ում այդպիսի իշխանությունների անհրաժեշտության կողմնակիցները մոտ 10%-ով պակաս են, ինչը կարող է նշանակել, որ հարցվածների մի մասը լավ հարաբերությունները ՌԴ-ի հետ կապում է ոչ միայն ՀՀ, այլ նաև ՌԴ համապատասխան իշխանությունների հետ: Ընդորում, կարելի է նկատել, որ ՌԴ հետ լավ հարաբերությունների զարգացման և ՀՀ-ում համապատասխան իշխանություններ ունենալու կողմնակիցների մասնաբաժինն աճում է տարիքի հետ. երիտասարդներն այդ հարցում պակաս մոտիվացված են, քան՝ միջին և առավելևս բարձր տարիքի հայաստանցիները: Պատճառն այն է, որ անկախության սերնդի մոտ բացակայում է ռուսների հետ համատեղ հասարակական կյանքի խորհրդային տարիների փորձը: Մյուս կողմից էլ, պետք է համաձայնվել Փարիզ-8 համալսարանի աշխատակից Լ. Վարդանյանի հետևյալ մտքի հետ. «...Մոսկվան բավական երկար ժամանակ անտեսել է այս սերունդը՝ նախընտրելով աշխատել բացառապես հայկական իշխանությունների հետ և առանց վարանելու օգտագործել իր տրամադրության տակ եղած քաղաքական և տնտեսական լծակները: Այսպես, վերջին տարիներին մայրաքաղաք Երևանը ցնցած սոցիալ-քաղաքական ցույցերը, որոնց ակտիվ զանգվածը հենց երիտասարդությունն էր, հաճախ ներկայացվում էին ռուսաստանյան հետազոտողների կողմից որպես արևմտյան հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող սադրանքներ, որոնց նպատակը, ըստ նրանց, Վրաստանի և Ուկրաինայի օրինակով Հայաստանում գունավոր հեղափոխություն իրականացնելն էր: Չնայած դեռևս դժվար է վերջնական սպառիչ բնութագիր տալ այդ ցույցերին, այնուամենայնիվ ռուս մասնագետների մեծ մասի կողմից դրանց պատճառների արհեստական նվազեցումը արևմտյան սադրանքների մակարդակին խոսում է երկրի իրական խնդիրների գիտակցումը մերժելու մասին»:[40]

• Ինչպես ՌԴ՝ որպես բարեկամ պետության մասին պատկերացումների հարցի, այնպես էլ ՌԴ հետ լավ հարաբերություններ զարգացնելու հարցի դեպքում գյուղաբնակները փոքր-ինչ ավելի դրական են տրամադրված, քան քաղաքաբնակները:

• Միևնույն ժամանակ, ՀՀ անվտանգային հարցերի կարգավորման գործում ՌԴ ավելի ընդլայնված և կոնկրետ դերակատարման պարագայում հայաստանցիների աջակցությունը նվազելու է: Այսպես, եթե ՀՀ տարածքում ՌԴ ռազմական հենքերի տեղադրումն ու ապա՝ հայ-ադրբեջանական սահմանագծի պահպանումը հայաստանցիների մեծամասնության համար ցանկալի է (պատճառները

40 https://repairfuture.net/index.php/hy/geopolitics-standpoint-of-armenia-ar/russian-armenian-relations-to-the-test-of-regional-geopolitical-changes-armenian , Հունիսի 13, 2017:

կարող են կապված լինել հետպատերազմյան իրավիճակի, հասարակությունում սպառողական և պատերնալիստական վերաբերմունքի տարածվածության, այլ հանգամանքների հետ), ապա ղարաբաղյան հակամարտության լուծման վստահելը ՌԴ-ին հասարակության մեծամասնությունն անընդունելի է համարում: Այդպես մտածող ռեսպոնդենտները, հավանաբար, մտավախություն ունեն, որ Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ վարում է գաղութատիրական, ոչ թե դաշնակցային քաղաքականություն[41], որի հետ են կապում որդեկորույս հազարավոր հայ ընտանիքների ողբերգությունը, հայոց պետականության կտրուկ թուլացումը, անվտանգային սպառնալիքների կտրուկ աճը:

• Վերոնշյալ հարցերում, դարձյալ, առավել ռուսամետ է ավագ, ապա՝ միջին տարիքի հայաստանցին. երիտասարդության վերաբերմունքը էապես ավելի բացասական է, հատկապես՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը միայն Ռուսաստանին վստահելու հարցի վերաբերյալ:

• Բոլոր քննարկված հարցերում գյուղաբնակներն ավելի ռուսամետ են, քան՝ քաղաքաբնակները:

Ինչպես տեսանք ՌԴ՝ որպես բարեկամ պետության, այնպես էլ ՌԴ-Արևմուտք կողմնորոշման հարցերի դեպքում, բարձրագույն կրթություն ունեցողների վերաբերմունքը պակաս ռուսամետ էր, քան՝ բարձրագույն կրթություն չունեցողներինը: Դիտարկենք, թե ՀՀ անվտանգային ոլորտում ՌԴ դերակատարման հնարավոր ընդլայնման հարցում ինչպիսին է կրթության գործոնի ազդեցությունը հարցվածների կարծիքների վրա (գծապատկեր 34)[42].

41 Ինչպես նշում է Մոսկվայի «Միաբանություն» կենտրոնի ղեկավար Ս.Կարախանյանը. «Ռուսաստանը ստացավ ռազմական ներկայություն Ադրբեջանում, նաև հնարավորություն՝ ավելացնել ռազմական ներկայությունը Հայաստանում»: https://www.1in.am/3032465.html, 19.11.2021

42 Առկա են վիճակագրական նշանակալի կապեր.

Հայաստանը Ռուսաստանին պետք է թույլատրի սեփական զորքերը և բազաները տեղադրել մեր երկրի տարածքում - X^2=21.733, p=0.001, Cramer's V=.121

Հայաստանը Ռուսաստանին պետք է թույլատրի հայ-ադրբեջանական սահմանային ողջ վերահսկողությունը - X^2=40.411, p<0.001, Cramer's V=.165

Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծումը պետք է վստահել միայն Ռուսաստանին - X^2=51.211, p<0.001, Cramer's V=.185

Հայաստանում պետք է լինեն Ռուսաստանի հետ հարաբերությունների ամրապնդումն ապահովող իշխանություններ - X^2=26.410, p<0.001, Cramer's V=.134



Գծապատկեր 34. Ռուսաստանի ցանկալի դերակատարումը ՀՀ անվտանգային հարցերում (ըստ հարցվածների կրթական մակարդակի, %)

Ստացված պատկերը վերահաստատում է այն, որ ՌԴ հետ հարաբերությունների խորացման հարցերի վերաբերյալ ավելի քննադատական-բացասական վերաբերմունքն ածանցված է կրթության մակարդակի հետ. որքան այն բարձր է, այնքան ավելին է հակառուսականությունը, որը, սակայն, կրիտիկական սահմանագծին չի հասնում: Այսպես, բարձրագույն կրթություն ունեցող հայաստանցի-

ների մեծ մասը կողմ է ՌԴ հետ լավ հարաբերությունների շարունակական զարգացմանը, ՀՀ տարածքում ՌԴ ռազմական ներկայացվածության ընդլայնմանը, ՀՀ-ում համապատասխան իշխանություններին աջակցելուն: Միևնույն ժամանակ, հարցվածների մեծ մասը, այդ թվում և առավելևս՝ բարձրագույն կրթություն ունեցողների մեծամասնությունը դեմ է Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման վստահմանը միայն ՌԴ-ին:

Հետաքրքիր է նկատել, որ գիտական աստիճան ունեցող հարցվածները (կազմել են բորոլ հարցվածների 1%-ը) էապես ավելի ռուսամետ են՝ ՀՀ տարածքում ռուսական ռազմահենքերի ընդլայնման, ՀՀ-ում ռուսամետ իշխանություններ ունենալու հարցերում, քան՝ բարձրագույն կրթություն ունեցող մյուս բնակիչները:

Քանի որ հատկապես ՀՀ տարածքում ՌԴ ռազմական հենքերի ծավալման, Ադրբեջանի հետ սահմանագծի՝ ՌԴ կողմից վերահսկման ենթադրյալ տարբերակների հանդեպ վերաբերմունքը հատկապես կարևոր է ՀՀ համապատասխան մարզերի բնակիչների պարագայում, փորձեցինք այն դուրս բերել ըստ մարզերի (գծապատկեր 35).



Գծապատկեր 35. Ռուսաստանի ցանկալի դերակատարումը ՀՀ անվտանգային հարցերումը՝ ըստ ՀՀ մարզերի բնակիչների, %

Հետաքրքիր է տեսնել, որ.

• ՀՀ տարածքում ՌԴ ռազմահենքերի տեղադրման և ընդլայնման հեռանկարը առավել դրական են համարում Ադրբեջանի հետ սահմանային՝ Տավուշի մարզի բնակիչները, ինչպես նաև Շիրակի մարզի բնակչությունը, որն ունի այդտեղ տեղակայված ՌԴ 102-րդ ռազմական հենքի ներկայության և ռուս զինծառայողների հետ առնչության երկարատև փորձ: Առավել բարձր է նաև նման ցանկությունը 2020թ. պատերազմի ընթացքում Լեռնային Ղարաբաղից ՀՀ տեղափոխվածների մոտ (բոլոր հարցվածների ընդամենը 0,3%): Միևնույն ժամանակ, Ադրբեջանի հետ սահմանային Վայոց Ձորում և Գեղարքունիքում նման վերաբերմունքն ավելի պասիվ է, ինչը նշանակում է, որ այնուամենայնիվ Ադրբեջանից եկող իրական վտանգը ՀՀ սահմանամերձ գոտիների բնակիչների մոտ Ռուսաստանին ամբողջությամբ ապավինելու տրամադրություններ չի ստեղծում: Միևնույն ժամանակ, ՀՀ տարածքում ռուսական ռազմական հենքերի ծավալմանը կողմ է բոլոր մարզերի բնակիչների մեծ մասը:

• Ադրբեջանի հետ ՀՀ ողջ սահմանագծի վերահսկման ենթադրյալ տրամադրմանը ՌԴ-ին նույնպես կողմնակից է բոլոր մարզերի բնակչության մեծ մասը, հատկապես հյուսիսում՝ Շիրակում, Լոռիում և Տավուշում: Կարևոր է նկատել, որ այդպիսին է նաև 2020թ. աշնանը Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմից հետո Ադրբեջանի տարածքային և ռազմաքաղաքական հավակնությունների թիրախը դարձած Սյունիքում, սակայն, այդ մարդի բնակչության գրեթե կեսը իրենց սահմանի վերահսկմանը ՌԴ կողմից դեմ է: Ընդհանուր առմամբ, ՀՀ անվտանգային հիմնախնդիրների լուծման այս հնարավոր տարբերակը հայաստանցիների համար պակաս ցանկալի է, քան՝ ՌԴ ռազմահենքերի ծավալման հրանավորությունը ՀՀ տարածքում:

• Հայաստանցիների անվտանգային մոտեցումներում նկատելի է ներքին հակասություն. մի կողմից, հարցվածների մեծամասնությունն այս կամ այն իմաստով ապավինում է ՀՀ տարածքի պաշտպանությունը ՌԴ-ին: Մյուս կողմից, երբ խոսքը Ղարաբաղի անվտանգության մասին է, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման, հարցվածների միայն 1/3-ն է պատրաստ վստահելու այդ հարցի լուծումը Ռուսաստանին: Այս իմաստով առավել ռուսամետ է Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բնակչությունը, որտեղ գրեթե կեսը պատրաստ է վստահել Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը ՌԴ-ին, իսկ այդ հարցում առավել քննադատական վերաբերմունք են ցուցադրում Երևանում և Արագածոտնում:

• Փաստորեն, մի կողմից, առկա է ներքին տարբերակում Հայաստանի և Ղարաբաղի անվտանգության, պաշտպանության միջև, այդ թվում՝ ՌԴ օգնությամբ: Հայաստանցիների էական մասը ՀՀ և Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը

միասնականության մեջ չի դիտում: Մյուս կողմից, հայաստանցիների մեծ մասը կարծես թե սեփականաշնորհում է ՌԴ անվտանգային ռեսուրսը որպես հնարավորություն ՀՀ համար՝ այն ղարաբաղյան հարցի լուծման համար ոչ բավարար, կամ անհամապատասխան համարելով: Դա կարող է կապված լինել ՀԱՊԿ շրջանակներում ՀՀ-ՌԴ փոխադարձ պարտավորությունների չտարածմամբ Ղարաբաղի վրա, սակայն տեսանելի է նաև հայաստանցիների գիտակցության մեջ առկա առաջնահերթությունը. սկզբից ՀՀ-ն, հետո՝ Ղարաբաղը, մինչդեռ Ղարաբաղյան առաջին պատերազմից և ՀՀ անկախության հռչակումից ի վեր փորձագիտական շրջանակներում հնչել է հակառակ, պատմականորեն հիմնավորված և ներկայիս փուլում դարձյալ փորձաքննված մոտեցումը՝ «կկորցնենք Ղարաբաղը, կկորցնենք նաև Հայաստանը»:

• Ամփոփելով ՀՀ անվտանգության ոլորտում ՌԴ դերակատարման մասին հայաստանցիների պատկերացումների վերլուծությունը՝ տեսնենք, թե որքանով է հանրային ընկալումներում Ռուսասնատի այդ դերը բացառիկ (այլընտրանքներ չունեցող): Տվյալ հարցը դիտարկենք ըստ հարցվածների տարիքային խմբերի[43] (գծապատկեր 36)[44].



Գծապատկեր 36. ՀՀ անվտանգային հարցերում ՌԴ դերակատարման բացառիկությունը (ըստ հարցվածների տարիքի և բնակավայրի, %)

43 Ըստ բնակավայրի՝ առանձնահատկություններ չեն բացահայտվել:
44 Առկա է վիճակագրական նշանակալի կապ. X^2=44.718, p<0.001, Cramer's V=.174:

Չնայած արդեն քննարկված արդյունքների, որոնց համաձայն հայաստանցիների մեծամասնությունը ՌԴ-ին հատկացրել է այլ պետությունների (այդ թվում՝ բարեկամ երկրների) հետ համեմատ առաջնային դեր՝ ՀՀ անվտանգային հարցերում (ԵՄ երկրներն առաջնային են համարվել ՀՀ ժողովրդավարացման, կրթության զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության հարցերում), այնուամենայնիվ միայն ՌԴ-ին ՀՀ անվտանգության ապահովման հարցը հայաստանցիները վստահել չեն ուզում: ՌԴ-ի՝ որպես ՀՀ միակ ռազմավարական դաշնակցի, իրավիճակը ցանկանում է միջինում յուրաքանչյուր երրորդ հարցված, ընդորում՝ էապես ավելի քիչ երիտասարդության (18%), քան միջին և բարձր տարիքի բնակիչների շրջանում:

Այստեղ դարձյալ երևում է հայաստանցիների մեծամասնության կողմից ներկայիս հետհեղափոխական և հետպատերազմյան փոփոխված իրավիճակի ընկալումը ՀՀ նախորդ իշխանությունների օրոք ձևավորված քաղաքական կատեգորիաների՝ կոմպլեմենտարիզմի (փոխլրացման) և Արևմուտք-Ռուսաստան ուղղություններով հավասարակշռող արտաքին քաղաքականության իրականացման ձևաչափում: Փաստորեն, «Հայաստանը Արևմուտքի և Արևելքի խաչմերուկում» քաղաքակրթական բանաձևը շարունակում է ներազդել հանրային գիտակցության վրա՝ անգամ այն պայմաններում, երբ քաղաքական իրողությունները պահանջում են ավելի իրատեսական և գործնական մոտեցումների մշակում և իրագործում: Կարելի է ասել, որ տվյալ քաղաքակրթական ձևաչափը հարմարավետ է՝ խուսափելու հստակ քաղաքական ուղղությունների մշակումից և զարգացումից, և որոշ իմաստով ազատում է պատասխանատվությունից կոնկրետ քաղաքական սխալների համար. եթե ձախողվում է ռուսամետ ուղղությունը, ապա կարելի է ասել, որ շեշտադրվել է արևմտյանը, և հակառակը՝ եվրոպական ուղղությամբ արտաքին քաղաքականության ձախողման համար իրավիճակը ներկայացնել իբրև ռուսական ուղղության զարգացում, կամ էլ սեփական անգործության մեղքը գցել Ռուսաստանի վրա:

Միևնույն ժամանակ, ՌԴ հետ հարաբերությունների դադարեցման կողմնակիցները փոքրաթիվ են, սակայն երիտասարդության շրջանում երևում է հակառուսականության աճող միտումը:

Քաղաքաբնակների և գյուղաբնակների կարծիքներում վերոնշյալ հարցերի վերաբերյալ տարբերություններ գրեթե չեն գրանցվել:

Կարևոր է պարբերաբար վերադառնալ շրջանառվող այն դիրքորոշմանը, թե ՀՀ-ում 2018թ. «Թավշյա հեղափոխությունից» հետո ձևավորվել են հակառուսական իշխանություններ: Ինչպես արդեն տեսանք նախորդ մասում, ՀՀ ներկայիս իշ-

խանություններին վստահող և չվստահող հայաստանցիների կարծիքներում ՌԴ հանդեպ վերաբերմունքի էական տարբերություններ չեն նկատվել, ինչը նշանակում է, որ հետհեղափոխական իշխանությունների հիմնական ընտրազանգվածը ամենևին էլ հակառուսական չէ: Միևնույն ժամանակ, այդ ընտրազանգվածի կարծիքներում նկատելի էր արևմտամետության որոշակի աճ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսին են ՀՀ անվտանգության հիմնահարցերում ՌԴ դերի բացառիկության վերաբերյալ կարծիքները՝ կախված ՀՀ հետհեղափոխական իշխանությունների հանդեպ վստահության մակարդակից (գծապատկեր 37)[45].



Գծապատկեր 37. ՀՀ անվտանգային հարցերում ՌԴ դերակատարման բացառիկությունը (ըստ հարցվածների՝ ՀՀ հետհեղափոխական իշխանությունների հանդեպ վստահության, %)

Կարելի է տեսնել, որ Ն. Փաշինյանի կառավարությանը լիովին վստահող հայաստանցիների հայացքներում հակառուսականությունն ավելի ակներև է, քան՝ ՀՀ հետհեղափոխական իշխանություններին չվստահող բնակիչների մոտ: Հակափաշինյանական բնակչությունն ավելի դրական է վերաբերում ՌԴ՝ որպես ՀՀ միակ ռազմավարական դաշնակցի դերակատարմանը, քան իշխանամետ ընտրազանգվածը: Համապատասխանաբար, հակափաշինյանականների շար-

45 Առկա է վիճակագրական նշանակալի կապ. X^2=44.976, p<0.001, Cramer's V=.175:

քերում ավելի սակավ են այն մարդիկ, ովքեր կողմնակից են ՌԴ հետ ՀՀ հարաբերությունների սահմանափակմանն ի օգուտ ԵՄ և ԱՄՆ հարաբերությունների զարգացման, քան՝ իշխանամետ ընտրազանգվածի պատկերացումներում: Միևնույն ժամանակ, ՌԴ հետ հարաբերությունների դադարեցման կողմնակիցների սակավաթիվ խմբում առկա է գերակշռում հակաիշխանական ընտրազանգվածի մոտ:

Կարևոր ենք համարում ՀՀ իշխանությունների հանդեպ ոչ միանշանակ վերաբերմունք ունեցող հայաստանցիների ընտրազանգվածի պատկերացումները, ովքեր (ընդհանուր հարցվածների մոտ 37%) զգալի թիվ են և կարող են հետագայում ստանձնել կա՛մ իշխանություններին սատարող, կա՛մ ընդդիմադիր, կա՛մ երրորդ ուժերին սատարող ընտրազանգվածի դերակատարում: Ներկայիս պայմաններում երևում է հասարակության այդ հատվածի մոտ ավելի հստակ միտում դեպի հակառուսականություն, քան՝ իշխանամետ և ընդդիմադիր հայացքներ ունեցողների մոտ:

ՄԱՍ 6. ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ 2020Թ. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՒ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՌԴ ԴԵՐԱԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ. սեպտեմբերի 27-ին վերսկսված և նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների կողմից ստորագրված եռակողմ հայտարարությամբ դադարեցված ղարաբաղյան պատերազմը էապես փոխեց իրավիճակն ինչպես տարածաշրջանում, այնպես էլ՝ տվյալ պետությունների միջև ձևավորված փոխհարաբերություններում: Պատերազմում հայկական կողմի պարտության հարցն ուղղակիորեն ածանցվեց ՌԴ դերակատարման հետ, որի մոտեցումները Հայաստանում շարունակաբար քննարկվում են դրական/բացասական հոլովույթներում: Այդ քննարկումները, մի կողմից, բխում են հանրային կարծիքից և տրամադրություններից, պատմական անցյալի վերիմաստավորումից, անվտանգային մտավախություններից և կոնկրետ սպառնալիքներին, մյուս կողմից՝ ներազդում հանրային կարծիքի և տրամադրությունների փոփոխության վրա:

Դիտարկենք հանրային տրամադրություններում առկա շեշտադրումները՝ կապված պատերազմում ՌԴ դերակատարման հանրային ընկալումների հետ (գծապատկեր 38)[46].

46 Հնարավոր էր միաժամանակ նշել մինչև երեք պատասխան:

Գծապատկեր 38. Ո՞վ/ովքե՞ր առաջին հերթին պետք է պատասխանատվություն կրի/կրեն 2020թ. ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության համար, %

Ստացված արդյունքներից կարելի է տեսնել, որ Լեռնային Ղարաբաղում 2020թ. աշնանը տեղի ունեցած պատերազմում հայկական կողմի պարտության մեջ, բնականաբար, բացի հակառակորդին մեղադրելուց, հայաստանյան հասարակությունն առաջին հերթին մեղադրում է ՀՀ նախորդ իշխանություններին (այդպես է կարծում յուրաքանչյուր երկրորդ հարցվող), ապա միայն՝ «Թավշյա հեղափոխության» արդյունքում ձևավորված իշխանություններին: Ընդորում, անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, չնայած իր առանձնահատուկ դերակատարմանը ինչպես ՀՀ հետհեղափոխական կառավարության գործունեության, այնպես էլ ղարաբաղյան պատերազմի շուրջ տեղի ունեցած քաղաքական գործընթացներում, հայկական կողմի պարտության մեջ մեղադրում է 10% պակաս բնակիչ, քան՝ իր կառավարությանն ընդհանուր առմամբ:

Հետպատերազմյան հասարակության մեջ առկա է որոշակի ինքնաքննադատությունը, որը, սակայն, համապարփակ չէ. այն, որ պետության պարտության մեջ մեղավոր ենք բոլորս, ընդունում է միայն յուրաքանչյուր երրորդը: Հայաստանցիների 70%-ը որևէ մեղավորություն չի զգում իրենց պետության պարտության համար, որի պատճառներն ավելի խորն էին, քան զուտ թերացումները մարտի դաշտում, և ներառում են պետական համակարգի անարդյունավետությունը, հասարակության մեջ լայնորեն տարածված կոռուպցիան, պետական մարմինների հանդեպ ցածր վստահությունը, անարդյունավետ քաղաքական վերնախավին պարբերաբար ընտրելը, և այլն: Այս բոլոր հիմնախնդիրների հիմքում ընկած են քաղաքացու վարքը, մոտեցումները, սոցիալական հարաբերությունների բնույթը, կենցաղային և կառավարչական մշակույթը, քաղաքական մտածելակերպն ու արժեհամակարգը, որոնք բերեցին պետության ձախողմանը: Այն, որ հայաստանցիների 70%-ն իրենց մեղքի բաժինն այս ամենում չի զգում՝ անգամ պատերազմում կրած պարտության դեպքում, **թույլ չի տալիս խոսել հասարակության կողմից պատերազմում կրած պարտությունից համապատասխան դասեր քաղելու, իր կենսակերպն ու գործելակերպը վերիմաստավորելու, նոր մոտեցումներ որդեգրելու և զարգացնելու, այլ կերպ ապրելու ջանքերի մասին:** Նկատելի է նաև, որ յուրաքանչյուր չորրորդը պարտության մեջ մեղադրում է հայկական զինված ուժերի հրամկազմի ներկայացուցիչներին:

Կարևոր է ուշադրություն դարձնել, որ հայկական կողմի ռազմաքաղաքական պարտության մեջ ՌԴ ղեկավարությանը մեղադրում է հայաստանցիների 13%-ը. այս թիվը նույնն է, ինչ Ռուսաստանին Հայաստանի թշնամի համարողներինը, ինչը ցույց է տալիս ուղղակի կապ ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության մեջ Ռուսաստանին մեղադրելու, և Ռուսաստանը ՀՀ թշնամի համարելու միջև:

Միևնույն ժամանակ, տեսնում ենք, որ արևմտյան պետությունների առաջնորդներին հայկական կողմի պարտության մեջ Հայաստանում գրեթե չեն մեղադրում (2,6%):

Այժմ տեսնենք, թե ինչպիսին են վերոնշյալ հարցերի շուրջ հայաստանցիների պատկերարացումների առանձնահատկությունները՝ ըստ ՀՀ հետհեղափոխական իշխանություններին սատարելու: Այս առանձնահատկությունների դուրսբերումը կարող է օգնել՝ հասկանալու ընտրազանգվածի ձևավորված կառուցվածքը պատերազմից հետո (գծապատկեր 39)[47].

47 Առկա է վիճակագրական կապ ՀՀ հետհեղափոխական իշխանությունների և ներքոնշյալ մի քանի փոփոխականների միջև.

Հայաստանի նախկին՝ մինչև «Թավշյա հեղափոխության» ղեկավարները. $X^2=118.177$, $p<0.001$, Cramer's V=.281:

«Թավշյա հեղափոխությունից» հետո եկած իշխանությունները. $X^2=218.061$, $p<0.001$, Cramer's V=.376:

Անձամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը. $X^2=293.988$, $p<0.001$, Cramer's V=.443:

Մենք բոլորս. $X^2=33.092$, $p<0.001$, Cramer's V=.148:

Ռուսաստանի կառավարությունը. $X^2=9.141$, $p=0.010$, Cramer's V=.078:

Արևմուտքի առաջնորդները. $X^2=6.435$, $p=0.040$, Cramer's V=.065:



Գծապատկեր 39. Ո՞վ/ովքե՞ր առաջին հերթին պետք է պատասխանատվություն կրի/կրեն 2020թ. ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության համար (ըստ հետհեղափոխական իշխանությունների հանդեպ վերաբերմունքի, %)

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ.

• Պատերազմում հայկական կողմի պարտության մեջ առաջին հերթին մեղադրելով մինչև «Թավշյա հեղափոխություն» գործած ՀՀ իշխանություններին՝ ներկայիս իշխանամետ ընտրազանգվածն առավել մեծաքանակ է, մինչդեռ նաև երևում է, որ հետհեղափոխական իշխանություններին չսատարողների էական մասը (46,3%) նույնպես հակված է մեղադրելու նախկին ղեկավարներին:

• Նույնը չի կարելի ասել իշխանամետ ընտրազանգվածի մասին՝ ինքնաքննադատության առումով. հասարակության իշխանամետ ներկայացուցիչներից շատ քչերն են հակված պատերազմում հայկական կողմի պարտության մեջ մեղադրելու ՀՀ ներկայիս իշխանություններին, և Է՛լ ավելի քչերը՝ անձամբ վարչապետ Ն. Փաշինյանին: Ստացվում է, որ Ն. Փաշինյանի ընտրազանգվածը պատե-

րազմի ժամանակահատվածում գործող ՀՀ իշխանություններին պարտության մեջ գրեթե չի մեղադրում, ուստի և արդարացնում է:

• Հետաքրքիր է նկատել, որ իշխանամետ ընտրազանգվածն ավելի է հակված հայկական կողմի պարտության մեջ մեղադրելու Ռուսաստանին, քան՝ հակաիշխանական հանրույթը, և հակառակը՝ ավելի շատ է քննադատում Արևմուտքին, քան՝ Ն. Փաշինյանի կողմնակիցները:

Հետպատերազմյան իրողությունները, դարձյալ, կապված են ՌԴ ակտիվ միջնորդության հետ, այդ թվում՝ եռակողմ բանակցությունների վարումը, ռուս խաղաղապահների ներկայությունը Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանի կողմից հայ գերիների վերադարձի խնդրի քննարկումը: Բացի այդ, սահմանազատման հիմնախնդրի բարձրացումն ու Ադրբեջանի կողմից ՀՀ պետական սահմանի պարբերական խախտումները Հայաստանում նույնպես ընկալվում են որպես իրողություն, որը փաստացի առաջացել է ղարաբաղյան պատերազմում պարտվելու հետևանքով, և որում անկնալվում է ՌԴ ակտիվ միջնորդական դերակատարումը:

Միևնույն ժամանակ, այս և ածանցյալ հիմնախնդիրների ընկալումը հայաստանյան հասարակության կողմից տեղի է ունենում «հնարավորություն/պատասխանատվություն» ձևաչափում. այսպես, Ռուսաստանի վրա և՛ հույս են դնում, և՛ գտնում են, որ այն պարտավոր է, և պատասխանատու է արված-չարվածի համար: Այստեղից էլ՝ հիասթափվածությունն ու բացասական վերաբերմունքը, որը գալիս է ունեցած հույսերի, և իրականության միջև անհամապատասխանությունից:

Այս իմաստով փորձենք տեսնել, թե, հայաստանցիների կարծիքով, ով է մեղավոր Հայաստանի սահմանը խախտող ադրբեջանցի զինվորներին ՀՀ տարածքից չհանելու, իրենց նմանատիպ գործելակերպը չկանխելու համար: Առաջին հերթին պետականության պայմաններում նման գործողությունների կանխարգելումը պետք է պետական իշխանության մարմինների պատասխանատվության և գործելակերմի դրսևորում լինի, սակայն հետպատերազմյան պայմաններում հայաստանցիների էական մասն իրենց հույսը դնում է արտաքին միջնորդների վրա: Տեսնենք, թե ինչպիսին է այդ հարցում հանրային կարծիքի պատկերը: Քանի որ խոսքը ՀՀ տարածք ներխուժող ադրբեջանցի զինվորականների մասին է, ապա տվյալ հարցը փորձենք դիտարկել՝ ՀՀ տարբեր մարզերում ապրող բնակիչների կարծիքի զգայունության, մտավախությունների առանձնահատկությունների տեսակետից (գծապատկեր 40)[48].

48 Կարելի էր ընտրել պատասխանի միայն մեկ տարբերակ:



Գծապատկեր 40. Ո՞վ է բոլորից շատ պատասխանատու մեր պետական սահմանները խախտած ադրբեջանցի զինվորներին ՀՀ տարածքից չհանելու համար, %

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ.

1. ՀՀ պետական սահմանը խախտող ադրբեջանցի զինծառայողների գործողությունները չկանխելու և չպատժելու համար հայաստանցիներն առաջին հերթին մեղադրում են ՀՀ կառավարությանը: Այս իմաստով առավել մեղմ և ՀՀ կառավարությանը չմեղադրող մոտեցում է ցուցաբերվում Արարատի և Լոռու մարզերում: Հետաքրքիր է նկատել, որ եթե Լոռու մարզի բնակիչներն Ադրբեջանի հետ սահման չունեն և, հավանաբար, այդ պատճառով տվյալ հարցում պակաս զգայուն են, ապա Արարատի մարզի բնակիչներն ուղղակիորեն առնչվում են և՛ Թուրքիայի, և՛ Ադրբեջանի սահմաններից եկող նման սպառնալիքների հետ, սակայն դարձյալ հակված են չմեղադրելու սեփական պետության կառավարությանը և, ինչպես տեսնում ենք ստացված արդյունքներից, պատասխանատվությունն ու մեղքը գցելու Ռուսաստանի Դաշնության վրա (35%): Ավելին. Արարատի մարզում ՀՀ սահմանների անարդյունավետ պաշտպանության համար հակված են ավելի շատ մեղադրելու Ռուսաստանին, քան՝ սեփական պետության կառավարությանը, անգամ այն պարագայում, երբ 2020թ. նոյեմբերի 9-ին, ղարաբաղյան պատերազմի դադարեցման օրը, ադրբեջանական կողմը Արարատի մարզի Երասխ գյուղի մոտ խոցել է ռուսական մարտական ուղղաթիռը, որը Ադրբեջանի հետ ՀՀ սահմանի պաշտպանության նպատակով իրականացնում էր մարտական հերթապահություն. օդաչուները զոհվել էին[49]:

2. Ադրբեջանցի զինծառայողներին ՀՀ տարածքից չհանելու, և նման իրավիճակներ չկանխարգելելու համար Ռուսաստանին են առավել հաճախ մեղադրում նաև Արագածոտնում (36%), սակայն այստեղ, ինչպես նաև ՀՀ մյուս մարզերում, ՀՀ կառավարության հանդեպ քննադատությունը գերազանցում է ՌԴ հանդեպ մեղադրանքներին: Այս իմաստով ՀՀ կառավարության անհամապատասխան գործելակերպի քննադատումն առավել հատկանշական է Վայոց Ձորում, որտեղ ՌԴ-ին գրեթե չեն մեղադրում: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ պետական սահմանի պաշտպանության համար պատասխանատվությունը ՀՀ կառավարության հետ կապելն ուղղակիորեն առնչվում է արտաքին սուբյեկտներին, առաջին հերթին՝ Ռուսաստանին չմեղադրելու հետ, և հակառակը:

3. Հատկանշական է, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար ստեղծված՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի, ինչպես նաև ՀՀ ռազմական անվտանգության առնչությամբ փոխադարձ պարտավորություններ ենթադրող ՀԱՊԿ-ի հետ հայաստանցիներն իրենց հույսերը գրեթե չեն կապում: Վերլուծության նա-

49 Տե՛ս, օրինակ. https://en.wikipedia.org/wiki/Yeraskh

խորդ մասում ցուցադրված՝ հասարակության շրջանում ՀԱՊԿ-ի ցածր վարկանիշը, իսկ այժմ նաև՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի ցածր արդյունավետությունը, արտացոլված են հանրային կարծիքի վերոնշյալ պատկերում. Կոտայքի և Տավուշի մարզերում ԵԱՀԿ Մինսկի խմբին մեղադրում են ավելի շատ, քան ՀԱՊԿ-ը, մյուս մարզերում՝ հակառակը, սակայն այդ կազմակերպությունների հետ քիչ սպասումներ ունենալը ստեղծում է նաև հիասթափության ցածր մակարդակը:

Հետպատերազմյան փուլում տեղի ունեցող գործընթացների համար պատասխանատվությունը ներքին և արտաքին դերակատարների հետ կապելու, հանրային սպասումներն ու հիասթափության աստիճանը դուրսբերելու համար ստուգել ենք նաև, թե ում հետ են հայաստանցիները կապում հայ ռազմագերիների՝ Հայաստան վերադարձնելու հնարավորությունը(գծապատկեր 41).



Գծապատկեր 41. Առաջին հերթին ու՞մ վրա է պետք հույս դնել հայ ռազմագերիների վերադարձի համար, %

Կարելի է տեսնել, որ ՌԴ-ը և՛ մեղադրում եմ ՀՀ սահմաններն ադրբեջանցի զինծառայողների ներխուժումից չպաշտպանելու (վատ պաշտպանելու) համար, և՛ առաջին հերթին հենց Ռուսաստանի հետ են հույսեր կապում՝ հայ ռազ-

մագերիներին Ադրբեջանից Հայաստան վերադարձնելու առումով: Հետաքրքիր է նկատել, որ ՌԴ-ին այս հարցում ԱՄՆ-ի հետ որոշակի հույսեր են կապում (նշել է հարցվածների 8%):

ՀՀ ներկայիս կառավարության հետ կապվող հույսերն այս իմաստով պակաս տարածված են, և Է՛լ ավելի քիչ հույսեր են կապում ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ: Ավելին. եթե ՀՀ սահմանը պարբերաբար հատող ադրբեջանցի զինծառայողների գործողությունները կանխելու համար պատասխանատվությունը գրեթե հավասարապես վերագրվում էր և՛ ԵԱՀԿ Մինսկի խմբին, և՛ ՀԱՊԿ-ին, ապա հայ ռազմագերիների վերադարձի հնարավորությունը ՀԱՊԿ-ի հետ առհասարակ գրեթե չեն կապում: Հետաքրքիր է տեսնել, որ այս հարցում ՀԱՊԿ-ի հետ հույսեր չունենալը գրեթե նույն դրսևորումն ունի, ինչ՝ սփյուռքահայ ազդեցիկ ներկայացուցիչների հետ, ինչը որոշակիորեն ցուցադրում է հայաստանցիների աչքերում սփյուռքահայության հեղինակազրկում:

Ցավոք, այս հարցում ՀՀ Զինված ուժերի պատասխան գործողությունների և հնարավորությունների վրա հույս է դնում ընդամենը 8%-ը, ինչը բանակի ավանդական հեղինակության համատեքստում փոքր թիվ է, և արտահայտում է բանակի՝ որպես ՀՀ անվտանգության կարևորագույն երաշխիքի, հանդեպ վստահության անկման արդիականացվող ռիսկը:

Չնայած ԶԼՄ-ներում լուսաբանված այն փաստի, որ 2021թ. հունիսի 13-ին ԱՄՆ և Վրաստանի համատեղ միջնորդական ջանքերով Ադրբեջանը Հայաստանին էր հանձնել տասնհինգ հայ ռազմագերի, մյուս հայ ռազմագերիների վերադարձի հնարավորությունները հայաստանցիները Վրաստանի հետ չեն կապում:

Սույն հետազոտության կարևոր նպատակներից էր՝ գնահատել ՌԴ դերակատարումը 2020թ. ղարաբաղյան պատերազմի ընթացքում՝ ըստ հայաստանցիների տպավորությունների ՀՀ և Լեղնային Ղարաբաղի հանդեպ Ռուսաստանի բարեկամական-աջակցող, չեզոք կամ հակահայկական դիրքորոշման: Եթե, մի դեպքում, մենք պարզել էինք հայաստանցիների կողմից Ռուսաստանի կերպարի մասին ընկալումները՝ որպես բարեկամի կամ թշնամու, ապա այստեղ փորձելու ենք ցույց տալ հարցվածների ընկալումներում ՌԴ վերաբերմունքը ՀՀ հանդեպ՝ որպես բարեկամի կամ թշնամու: Այդպիսի ընկալումներ ոչ թե ՌԴ իրական վերաբերմունքի մասին տեղեկատվություն են, այլև հարցվածների կողմից ՌԴ հանդեպ վերաբերմունքի հայելային պատկերը, արտացոլանքը.ցանկացած մեղադրանք այլոց կողմից թշնամանքի դրսևորման մեջ ենթադրում է նաև սեփական նմանատիպ վերաբերմունք, և հակառակը: Ուստի, այս կամ այն պետության գործողությունները որակելով որպես հակահայկական՝ արտահայտվում է տվյալ

պետության հանդեպ սեփական (մասնավորապես՝ հնարավոր հակառուսական) տրամադրությունը, որի պատճառաբանումը կարող է ունենալ ինչպես օբյեկտիվ հիմքեր, այնպես էլ լինել սեփական վերաբերմունքն արդարացնելու միջոցը:

Տեսնենք, թե ինչպես է հասարակությունը գնահատում ՌԴ դերակատարումը 2020թ. ղարաբաղյան պատերազմի ընթացքում՝ ըստ հայաստանցիների համար ցանկալի հայամետության (այստեղից էլ նաև՝ բարեկամություն/թշնամանք եզրույթներում դաշնակցի գործողությունների ընկալումը, գծապատկեր 42).



Գծապատկեր 42. Ռուսաստանի դերակատարումը 2020թ. ղարաբաղյան պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո՝ ըստ բոլոր հարցվածների, %

Կարելի է տեսնել, որ հայաստանցիների մեծամասնության կողմից (73%) ՌԴ դերակատարումը 2020թ. Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած պատերազմական գործողություններում և հետպատերազմյան փուլում հայանպաստ չի համարում, ինչը նաև բացատրում է ՌԴ՝ որպես բարեկամ պետության հայաստանցիների վերաբերմունքի զգալի փոխակերպումը հակառուսականության: Հետխորհրդային փուլում գրեթե ամբողջ հայաստանյան հասարակության կողմից ՌԴ՝ որպես ՀՀ բարեկամի և ռազմավարական դաշնակցի մասին պատկերացումը, ՀՀ-ՌԴ ռազմավարական փոխհարաբերությունների փաստաթղթային ամրագրվածությունը և համապատասխան հռետորաբանությունը ստեղծել էին գերագնահատված հույսեր և սպասումներ, որոնք փաստացիորեն չարդարացան, կամ արդարացան միայն մասամբ: Հնարավոր է, որ ՀՀ-ՌԴ փոխհարաբերությունների այլ ձևաչափի և ավելի իրատեսական հանրային սպասումների պայմաններում

ՌԴ փաստացի դերակատարումն արդի իրադարձություններում ավելի բարձր գնահատականի արժանանար և ընկալվեր որպես ավելի հայամետ:

Հետազոտության արդյունքում դուրս են բերվել հայաստանցիների կանխատեսումները՝ ղարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցող գործընթացներում հավանական զարգացումների և դրանցում ՌԴ հնարավոր դերակատարման վերաբերյալ: Ի տարբերություն մինչ պատերազմ հայաստանյան հասարակության պատկերացումներում ՌԴ հանդեպ ուռճացված սպասումների և փաստացի գերագնահատված դերի՝ հետևյալ կանխատեսումները բխում են արդեն իրական, 2020թ. պատերազմի հետևանքում ստեղծված իրավիճակից, որը, սակայն, ինչպես տեսանք հետազոտության նախորդ մասում, հայկական կողմի պարտության մեջ մեղավորների առումով նույնպես տարաբնույթ գնահատականների էր արժանացել (գծապատկեր 43).



Գծապատկեր 43. Եթե Ադրբեջանը նորից հարձակվի Լեռնային Ղարաբաղի մնացյալ մասի և ՀՀ սահմանների վրա, ապա որքանո՞վ է հավանական, որ ..., %

Հանրային կարծիքի ստացված պատկերը վկայում է այն մասին, որ 2020թ. ղարաբաղյան պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակում և ՀՀ ու Լեռնային Ղարաբաղի հայկական մնացյալ տարածքների համար առկա սպառնալիքների պայմաններում հայաստանյան հասարակությունը չունի հստակ պատկերացում իրավիճակի առավել կանխատեսելի զարգացման վերաբերյալ, չի կարողացել նաև առավել հավանականորեն գնահատել ՌԴ՝ որպես ռազմավարական դաշնակցի հետագա գործողությունները: Այլ կերպ ասած՝ հայաստանյան հասարակության մեջ ՌԴ գործելակերպի առնչությամբ ավելի տարածված են զգացմունքային հույսեր և նվազող սպասումներ, քան՝ պլանավորում, իրատեսական կանխատեսումներ և հաշվարկներ: Ինչպես տեսնում ենք գծապատկերից՝ հայաստանցիները գրեթե նույնքան հավանական են համարում միմյանց բացառող տարբերակներ, որոնցում առավել հավանական է ՌԴ կողմից ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հայկական մնացյալ մասի պաշտպանությունը: Միևնույն ժամանակ, գրեթե հավասարապես հավանական են և՛ Ռուսաստանի կողմից այդ տարածքների հանդեպ Ադրբեջանի և Թուրքիայի ռազմական բնույթի ոտնձգությունների պասիվ դիտարկումը, և՛ միասին ՀՀ և Լեռնային Ղարաբաղի տարածքների և ազդեցության գոտիների բաժանումը: Հայաստանցիների պատկերացումներում անհստակ է նաև պատկերացումն այն մասին, թե ինչպես է Ռուսաստանը հանդես գալու ՀՀ շահերի պաշտպանության դեպքում՝ ինքնուրույն (փոքր-ինչ ավելի հավանական է), թե՝ ՀԱՊԿ ձևաչափում: Հայաստանցիները չեն կարողացել հստակ և ավելի մեծ հավանականությամբ կանխատեսումներ անել ՌԴ՝ որպես ռազմավարական դաշնակցի հնարավոր գործողությունների մասին: Հայաստանյան հասարակության համար ռազմավարական դաշնակցի գործողությունների դժվար կանխատեսելիությունն ու սպասումների անորոշությունը խոչընդոտում է ՀՀ և ՌԴ արդյունավետ փոխգործակցությունն ու սպառնալիքներ է ստեղծում առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության, ապա՝ ՀՀ անվտանգության համար:

Վերջաբան

2020թ. աշնանային պատերազմը, մի կողմից, ամրապնդեց ՌԴ-ի ընկալումը դաշնակցի կերպարի մեջ, մյուս կողմից՝ այն կասկածի տակ դրվեց, որովհետև չարդարացվեցին հանրային սպասումները, որոնք օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն չափազանցված էին, ձևավորվել էին Ռուսաստանի և Հայաստանի շահերի նույնացման սխալ պատկերացման հիման վրա: Հայաստանցիների հանրային պատկերացումներում շրջանառվեց այն կարծիքը, թե ՌԴ կատարեց իր դաշնակցային պարտականությունները, բայց իրեն *մեծ եղբոր* պես չպահեց, չմիջամտեց այնպես, *ինչպես որ պետք էր*: Այդպիսով, հայ-ռուսական հարաբերությունների հանրային ընկալման ինստիտուցիոնալացումը չհասավ իր տրամաբանական հանգրվանին, քանզի ՀՀ-ՌԴ փոխհարաբերությունների դաշնակցային ձևաչափը *de facto* փոխարինվեց խնամակալական փոխհարաբերություններով, այն էլ՝ շատ հայաստանցիների սպասումներից ավելի փոքր ծավալով:

Բացի այդ, հետպատերազմյան փուլում ՀՀ՝ որպես Լեռնային Ղարաբաղի անվտանգության երաշխավորի նախկին դերակատարումը գործնականում և հանրային ընկալումներում կորցրեց իր նշանակալիությունը: Միևնույն ժամանակ, և՛ հայաստանյան, և միջազգային տեղեկատվական ու փորձագիտական հարթակներում առաջ եկան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկայիս փուլում ՌԴ դերակատարման տարաբնույթ մեկնաբանումներ, որոնցից որոշներն ունեն ընդգծված հակառուսական բնույթ:

ՌԴ դերակատարման քննադատության հանգամանքը արևմտյան երկրներում ավանդական հակառուսական քարոզչության պարագայում հասկանալի է, սակայն ՀՀ ներքին անկայուն քաղաքական իրավիճակում և սեփական միջոցներով Ղարաբաղը պաշտպանելու անկարողության պայմաններում Ռուսաստանի միջնորդական դերակատարման քննադատությունն անհեռատես է և ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից վտանգավոր: Այս իմաստով հետպատերազմյան իրավիճակի վերահսկման քաղաքական գործընթացում ՀՀ դերակատարման գոնե մասնակի վերականգնումը խիստ կարևոր է:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ:

Հեղինակներ՝
Աթանեսյան Արթուր, Մկրտիչյան Արթուր

Դիզայնը և էջադրումը՝ «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
Սրբագրումը՝ Արթուր Աթանեսյանի

Տպագրությունը՝ «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 100 հտ.

«Թումո Դիզայն» ՍՊԸ
Օրբելի եղբայրների փող., 45շ., Երևան, 0028, ՀՀ
+374 99 52 83 49, +374 91 41 69 38
www.tumo.am, contact@tumo.am

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2021

ISBN 978-9939-1-1444-6

9 789939 114446